

յերկիրս Մոկաց ի վանքն սուրբ Գէորգայ զօրավարին յառաջնորդութեան սուրբ ուխտիս Յովսէփ վարդապետի եւ Ներսէս եպիսկոպոսի» (Արժուի Վասպ.ի, 1859, էջ 155—156 եւ Լալայեանց, Ջաւախք, էջ 289) : — 1688ին Աւետարան մը կը տրուի յիշատակ՝ «Ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին» (Ակինեան շ. Ն., շաւաք. Յիշատ., 1688, Երեւան, Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյն Աւետարանը, որ դուրսէ Մուղնի Ս. Գէորգի նուիրուած ըլլայ) :

Փութկու վանքի մէջ աւանդութեան համաձայն պահուած են Ս. Գէորգի ծնօտն ու աջը (համտ. վերը եւ Մասիս, 1892, էջ 111, ուր եւ վան-Վասպուրականի միւս վանքերու մասին ալ հակիրճ տողեր նուիրուած են) : Ս. Գէորգի սոյն մասունքը ժամանակ մը կը պահուի Պէդար գիւղի եկեղեցին (Բիւզանդիոն, 1904, Թ. 2289) :

Փութկու Ս. Գէորգի վանքը ունեցած է քիչ հող ու կալուած, բայց ունեցած է մեծ համրաս իրրեւ հրաշագործ : Իր անունովը մեծամեծ գումարներ քովէ քով կը բերուէին⁴⁶ : Անոնցմէ մաս մը վանականներու բաժինն էր, մաս մը հոն ապաստանողներու կը յատկացուէր, իսկ մաս մըն ալ Աղթամարի կը յանձնուէր, քանի որ անոր իշխանութեան ենթակայ էր⁴⁷ : Յաւելունք՝ մաս մըն ալ հաւաքողները բացի իրենց արդար վարձքէն գաղտագողի իրենց կը սեպհականէին (Բիւզանդիոն, 1903, Թ. 2149, համտ. նաեւ Արժագանք, 1886, էջ 681—682) : Այս հանգանակութիւններու միջոցին խարէութիւններ եւ կեղծիքներ եւս կը սպրդէին (Բիւզանդիոն, 1903, Թ. 2149) :

Ն. Ն. ՈՍԿԵԱՆ

⁴⁶ Փիրղալէճեան կ'արտայայտուի՝ «Ամ ըստ ամէ քանի հազար դահեկան սուրբ Գէորգայ սակս ժողովնն անխափան, սորա տաճարն Մոկաց երկրին կայ սահման, Մերձ Եղերով լեռն, որ է իւր յանդիման» : (Չորս Ընկերք որ է ճանապարհորդութեան վանայ մինչեւ Կ. Պոլիս, Թիֆլիս 1882, էջ 43) :

⁴⁷ Յովհաննէս ճահտեօին 1839ին Աղթամարի կաթողիկոսին յանձնարարականովը Պոլիս կու գար եւ կը ծանուցանէր որ Բուրա մը վանքին կը տիրանայ եւ վանահայրը կը սպաննէ եւ կը խնդրէ «Քէրճան» տալ իրեն շտիրապետել զնոյն սուրբ վանք : Խնդրին կարգադրութիւնը Պետրոս արքեպ. Կուրաղիին կը յանձնուի (Չեռագիր Վիենն. Միթիթարեան Մատենագարանի, Թիւ 703, էջ 63) :

ՍԵԼՆԵՉՈՐ-ԲԵՂԵՅԻ ՎԱՆՔԵՐԸ

Սալնոյ ձորը Աղձնեաց նահանգի գաւառներէն է, բայց յետագային իրրեւ Բաղէշի կամ Պիթլիղի գաւառ (ոչ՝ հին սահմաններովը) մաս կազմած է վանի նահանգին, որուն մէկ գաւառն ալ Մուշ էր : Բայց 1875ին Բաղէշ եւ Մուշ վանի նահանգէն բաժնուելով ի միասին մէկ նահանգ կը կազմեն :

1. ԱՓԱՆԱԳԻՆԷԻ ԿԱՄ ՄՈՃԿՈՆԻՅ ՎԱՆՔԸ

2. Սարգիսեան կը գրէ՝ «Տատիկ, մի ի գաւառացն է սա Աղձնեաց աշխարհին... ի վերջին ծայր գաւառիս լայնացեալ դաշտանայ ձորն հարուստ տարածութեամբ եւ լերինքն հանդիպակաց սահման հատանեն նորա եւ գաւառին Խիղանայ : Ի հիւսիսոյ կուսէ գեղատեսիլ դաշտավայրիդ ի բարձր դուրի է փոքրիկ մենաստան Աթանազինէ հայրապետին Մոճկոնից վանք կոչեցեալ յանուանէ գիւղին որ է առընթեր նորա...» (Տեղագրութիւնք, էջ 249) : Մոճկոնք գիւղի հիւսիսային կողմը, սարաւանդի մը վրայ հիմնուեր է Աթանազինէի կամ Մոճկոնից վանքը (Լուճայ, 1900, Ա., էջ 220. Սրուանձտեանց, Համով Հոտով, էջ 113), որուն եկեղեցին «Մատրանաչափ (է) եւ դուրկ ի միարանից եւ ի բնակարանաց, չիք նորա թեմ եւ ոչ մի» (Սարգիսեան, անդ, էջ 249) : Անձանօթ կը մնան այս վանքին ինչպէս հիմնարկութեան պարագաները, նաեւ գործունէութեան շրջանը : Յիշատակագրութենէ մը կ'իմացուի թէ՛ տաճարը 1633ին նորոգութիւն տեսած է¹ : Ունեցած է արտեր եւ ընդարձակ մարդագետին, պարտէզ ու ջաղացք², նաեւ ձեռագիրներ (Հայրենիք, 1893, Թ. 415, Բիւզանդիոն, 1897, Թ. 328. 1898, Թ. 508. 1907, Թ. 3368, Էփրիկեան, Բնաշխ. Բորն., էջ 182 եւ Լուճայ, 1900, Ա., էջ 220) :

2. ԱՄՐՏՕԼԻ ՎԱՆՔԸ

Ամրտօլի վանքը Կոլլոտի նկարագրութեան համաձայն կը բարձրանայ Բաղէշի

¹ Ս. Արիստակէս կը համարուի այս վանքին հիմնադիրը (Կալհօկեցի Պետ. Մ. Վ. Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս, Կ. Պ. 1881, էջ 53, ուր եւ Սալնաձորի միւս վանքերու մասին հակիրճ տողեր նուիրուած) :

² Մուշի վանքերու շարքին մէջ եւս պիտի անդրադառնանք այս վանքին, ինչպէս նաեւ ուրիշ քանի մը վանքերու, որոնց մասին այս տեղ կա՛մ քիչ խոսուած է եւ կամ ամենեւին :

«վիմաժիլ» բլուրին դադաթը: Արեւելեան կողմէն՝ «սահմանաւորեալ արեզնածագ կողմամբ դարմանաչատ աղբերակօք կարկաչահոսիւք եւ ծաղկապաճոյճ փոքր պարտիզիւ»: Արեւմտեան հարաւային կողմէն՝ «Յիծաղածաւալ երկարաչու վիմարուղիս յորդ ընթացիւ գետով եւ թեկնաթէկ հեղաքայլ առուիւ, ոլորտախաղացեալ առ հարաւով. գեղաւորեալ ծառատնկօք պտղաւէտիւք»: Իսկ հիւսիսային կողմէն՝ «Բարձրաբերձ տամբք քրիստոնէից հպաւորեալ շիրմիւք հաւատացեալ ննջեցելոց» (Բիւզանդիոն, 1900, թ. 1204 եւ 1907, թ. 3300)³:

Վանքին տաճարը բաւական ընդարձակ է — ունի 15—20 ճարտարապետական կանգուն տարածութիւն — եւ օժտուած երկու կարգ երեքական սիւներու վրայ բարձրացած կամարներով, որոնց վրայ փոքրիկ եւ գոթական ուճով շինուած կաթուղիկէ մը կը գտնուի: Աչքառու են տաճարին որմերուն վրայ քանդակուած զանազան զարդերը, բազմազան խաչերը եւ դռներու, խաչկալներու եւ եպիսկոպոսական աթոռին վրայ եղած գեղեցիկ ձեռարուեստները: Բեմին աջակողմը գետեղուած է քար մը, որ աւանդութեան համաձայն թաղէոս առաքեալէն օժուած է⁴ (Բիւզ. 1900, թ. 120, 1907, թ. 3300, 1900, թ. 3916):

Կաթուղիկէն մեծ է եւ ութանկիւնի: Դմբէթին վրայ՝ կայ այս արձանադրութիւնը՝ «Շինումն եղել սուրբ զմբէթիս ծերունազարդ Տեառն Վարդանիս, այլ եւ քաջ հովուապետին սրբազան եպիսկոպոսին միշտ մշտաչէն վանօրէիցս, հօրս մերոյ Տէր Ղազարին, կաթնամատոյց մօրս Սարային, եղբօրս մեր Տէր Պաղտասարին... եւս իշխանապետ եւ կենդանի Պաշմանուկին, այլ եւ համայն Քրիստոնէից ի ծայր թւոյն մեր տօմարիս ԻԶ յորելեանի իննեակ թվոց պակասի 1692 Յունիս ամսոյ ԺԱ. յոյժ դառնացեալ ժամանակի» (Բիւզանդիոն, 1909, թ. 3916): Պալեանին

³ Ամբաստանի վանքը հիմնուած է Բաղէշ քաղքին հարաւային ծայրը (Միրախորեան, Ուղեւորութիւն, Ա., էջ 58, Բիւզանդիոն, 1900, թ. 1001), լեռնաձորի մը կուտակումի մէջ եւ օժտուած գեղեցիկ դերքով (Բիւզանդիոն, 1900, թ. 1200):

⁴ «Թէ աւաղ խորանը եւ թէ նորա երկու կողմի փոքրիկ խորաններն կամարակապ եւ կիսաբլուրակ են: Աւաղ խորանին մէջ տեղը լուսամուտ մը կայ. ասոր անուան է սուրբ Յովհաննէս Մկրտիչ. աջ կողմինը Ս. Ստեփաննոս, ձախ կողմինն է Աստուածածին: Աւանդ քարաչէն է, որուն երկու կողմերն երեքական օտաք սանդուխներ կան. աջ եւ ձախ կողմերուն սեղաններն ալ այս միջին սեղանին կցեալ են» (Արծուի Վասպ., 1864, էջ 67):

այս արձանադրութիւնը ծանօթ էր այսպէս՝ «Ի ծայր թրւոյս ԻԶ. յորելինի, իննեակ թուոյ պակաս... Յունիս ամսոյ ԺԱ. շինումն եղել սուրբ զմբէթիս, ծերունազարդ Տեառն Վարդանիս, եռանդուն հովուապետիս, սրբազան եպիսկոպոսիս, միշտ մշտաչէն վանօրէիցս, հօրս մերոյ Տէր Ղազարին... տուք ողորմին»⁵ (Բիւզանդիոն, 1907, թ. 3300):

Եկեղեցւոյն գեղակերտ բեմին առջեւն է Վարդան Բաղիշեցիի դամբանարանը, որուն սնաքարին վրայ կայ՝

«Ով կենատու սուրբ Պաշ Փրկչին.
Ներկեալ արեամբ կենարարին
Բարեխօսեա յօրն ահագին
Վասն Վարդանայ մեծ տէլէտին
Շինող սրբոյ այսմ տաճարին
Թվին ՌՃՊԴ»:

(Արծուի Վասպ., 1864, էջ 69. Բիւզանդիոն, 1907, թ. 3300 եւ 1909, թ. 3196. Կիւլէսէրեան, Կոլոտ Յովհ. Պատրիարք, էջ 201, ուր ՌՃՊԴ թուականը կը սրբազրուի՝ ՌՃՄԴ):

Իսկ անոր տապանաքարին վրայ քանդակուած է՝

«Ի տապանի աստ ամփոփի,
Մարմին մաքուր մեծ հոետորի,
Տեառն Վարդանայ փաշերայի (փաղերայի),
Արի եւ քաջ վարժապետի
Պարազնաղգեաց ճգնաւորի,
Աստուածարան վարդապետի,
Որ ի հովտէս յայս տրտմալի,
Ել առ Փրկիչն, ի յոյսն բարի (բնաւի),
Ի ԻԳ. յորելէնի
Երբեակ թուոյս (թուով) յաւելադրի,
Որ հանդիպիք տուք զողորմի»:

(Արծուի Վասպ., 1864, էջ 68. Կիւլէսէրեան, Կոլոտ Յովհ. Պատրիարք, էջ 201—202 եւ Բիւզանդիոն, 1907, թ. 3300 եւ 1909, թ. 3916 ուր բաւական տարբեր է ընթերցուածը):

Վարդանին դամբարանին մօտն է Բարսեղ Բաղիշեցիի հանգստարանը՝

«Ով քառանիշ զէն յաղթութեան,
Ներկեալ արեամբ տէրունական,
Բարեխօսեա (բարեխօս) առ անմահ արքայն՝
Մեծ Բարսեղին բարուն անուան
Թվին ՌԿԴ (1615) յիշեցէք ի Քրիստոս»:

⁵ Սոյն արձանադրութեան տակ դեռ գրուած է՝ «Վերակացութեամբ վանքին Գրիգոր վարդապետի, ՌՄՂԹ թուականին» (Բիւզանդիոն, 1908, թ. 3300):

(Կիւլէսէրեան, Կոլոտ Յովհ. Պատրիարք, էջ 201. Արծուի Վասպ., 1864, էջ 68) :

Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը, որ Զե- նորի պատմութեան առաջին հրատարակու- թեան կցեր է «Յիշատակարան պատմագրա- րար», կը հաղորդէ նոյնին մէջ թէ Վարդան կը հանդէ՛ «...ի դամբարանի ներ յատակի սոյն սուրբ տաճարի առընթեր վերոյասացեալ վարդապետիս Բարսղի⁶ ընդ այլ համակար- զազլուիս բարունեացն» (Անդ, էջ 147—148) : Այս վարդապետներէն մէկն էր Աբրահամ վարդապետ Ամթեցին, որ 1681ին կը մեռնի եւ Ամրդօլի մէջ կը թաղուի (Բիւզանդիոն, 1907, Թ. 3916) : Նմանապէս հոս կը ցուցուի Մկրտիչ Լպիսկոպոս Քարհատեանի գերեզ- մանը (Անդ, 1907, Թ. 3300) :

Տաճարին արեւմտեան հիւսիսային ան- կիւնը կան երեք գերեզմանաքարեր, որոնցմէ մէկուն վրայ կը կարդացուի՝ «Այս է տապան մերոյ պետի Կողտանցի Զաքարիայի, որ փո- խեցաւ երկրէս երկին ՌՄ քառասուն վեցին նոյեմբերի Ա. ⁷» (Անդ, 1907, Թ. 3300) :

Արտաքին մեծ դրան ճակատը քանդա- կուած է այս արձանագրութիւնը՝ «Կարողու- թեամբն Աստուծոյ եւ շնորհօք սուրբ Հոգւոյն շինեցաւ գեղեցկազարդ տաճարս սրբոյն Յով- հաննու Կարապետիս վերակացութեամբ Վարդանայ աստուածարան վարդապետի եւ օգնականութեամբ քաղաքիս եւ թաղիս Ժո- դովրդոց ի թվին թՃԽԳ. ամէն» (Բիւզան- դիոն, 1907, Թ. 3300) :

Հ. Սարգիսեանի վրայ Ամրտօլի շէնքը՝ շատ գէշ, իսկ դիրքը՝ շատ լաւ կ'աղդէ : Կը գրէ՝ «Զորք մենաստան են ի քաղաքիս (Բա- դէշ), երեքն արտաքոյ շինին եւ միւսն ի միունն թաղիցն, որ կոչի Ամրտօլ կամ լաւ եւս Ամլորդւոյն վանք. զի յանուն սրբոյն Յովհաննու Կարապետին կառուցեալ է ի թաղի անդ որ ի նոյն անուն յորջորջի : Մե- նաստանին շինուած շունի ինչ արժանի գո- վեստից, զի խրթնութեամբ եւ մթութեամբ

եւ անձուկ տարածութեամբն շտայ ինչ գուարձութիւն ումեք, այլ դրիցն վսեմու- թեամբ զանցանէ յոյժ քան զբաղում շինուա- ծովք քաղաքին, քանզի ի ձորամիջի դոլով նիտա նորա եւ ի վերայ կողաց լերին նորին ձորավայրի երեսք պատուհանացն հային ընդ ամենայն երկայնութիւն ձորոյն, ընդ որ եւ մի ի դիտոցն անցանէ... եւ ի բարձրութենէ անտի տեսնել սքանչելի երեւցուցանէ, մա- նաւանդ որոց ի տանիսն ելեալ ի զնին կայ- ցին, ձորն մեծ ակներեւ լինի ական մինչեւ ցքաղաքամէջն, պարտէզքն եւ ծառաստանքը խառն ընդ տանց շինուածոց եւ դետն անրիդ- հատ խոխոջմամբ անցանելով զառաջեալ եւ գետեղերն ընդ ամենայն երկայնութիւն մե- նաստանին է պարտէզ աստիճանաձեւ յօրին- մամբ, եկեղեցին ընդարձակ, սիւնազարդ եւ զմրեթաւոր, մեծ է քան զամենայն եկեղեցիս միւս վանորէից եւ քաղաքին» (Տեղագրու- թիւնք, էջ 242) :

Ս. Սարգիսեանի տեսած Ամրտօլի վանքը Բարսեղ եւ Վարդան վարդապետներու մա- սով մը շինած եւ մասով մըն ալ վերականգ- նած մենաստանը չէր : Անոնց կրամած, սրբա- տաշ, խաչակառ կաթուղիկէիւ եւ «բախատեա- րնակարանիւք» (Կիւլէսէրեան, Կոլոտ Յովհ. Պատրիարք, էջ 144) վանքէն կը մնար միայն տաճարը, իսկ «բախատեա» բնակարանները «հիմայ խրթնացած եւ լքուած» (անդ, էջ 145, ծն. 1) :

Խնդրի առարկայ եղած է թէ ինչէն այս վանքը Ամրդօլ կամ Ամրտօլ կոչուած է : Ոմանց համաձայն այսպէս կոչուած է, վասն զի նուիրուած է Ս. Յովհաննէս Մկրտիչին, որ ամուլ Եղիսաբէթի որդին էր եւ ասկէ առ- նուած՝ անուանուած է Ամլորդիի վանք, սա- կայն Ժողովրդեան բերանը զբատեղափոխու- թեամբ եղած Ամրդօլ կամ Ամրտօլ (անդ, էջ 143—144, ծն. 1) : «Պատճառ անուանա- կոչութեան Ամրդօլու վանք, ոմանք ասացին աղճատեալ յանուանէ Ամլորդւոյն Յովհաննու Կարապետի եւ Մկրտիչի վանք : Այլք թէ այն թաղ քաղաքին, ուր էր այս վանք կոչեցեալ է եւ կոչի Ամրտօլ եւ ի թաղէն առեալ զանունն կոչին Ամրդօլու վանք» (Հայաստան, 1851, Թ. 34—86, Ինճիճեան, նոր Հայաստան, էջ 173) : Իսկ աւանդութեան համեմատ զայն նորոգող Ամիր եւ Տօլ եղբայրներու անունովն այդպէս կոչուեր է (Բաղմավէտ, 1901, էջ 15, Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, էջ 380) : Պալեան կը միտի տարակուսելու որ այդ ա-

⁶ Երբիմներուն վրայ՝ Բարսեղ եւ Վարդան վար- զապետներու, որոնք ստուգիւ Ամրդօլ ըրին «գեղեց- կազարդ, արփիսարաս, նշանաւոր, բարձրահամբաւ, մեծ համալսարան» (Կոլոտ, էջ 142), Ժամանակ մը դիշեր ցերեկ կանթեղ կը վառուէր (Հայաստան, 1851, Թ. 8—60) :
⁷ Գուցէ միւս երկու գերեզմաններն ալ Յովհան- նէս եւ Խաչատուր վարդապետներու հանգստարան- ներն ըլլան (Թօփճեան, Յուլ. հայ. Զեռ. Դաղեան Վ.ի, Ա., էջ 99 եւ Դիւան, Ժ., էջ 54) :

նույն Ամիրսուլ⁸ կամ Ամիրդուլաթ անձէ մ'ըլլայ, որ անոր նորոգութեան նպաստած է (Բիւզանդիոն, 1907, Թ. 3300) :

Ինձ հաւանական կը թուի թէ վանքին անունն եղած է Ս. Յովհաննէս Մկրտիչ. ինչպէս ձեռագիրներն ալ կը հաւաստեն (համալսարան) եւ ապա թաղին անունովը կոչուած է Ամիրդուլու վանք. ինչպէս Աւետիսեան եւ Գոմոց վանքերը :

Ամիրդուլի վանքը հին հիմնարկութիւն է՝ «Ի հին եւ ի վաղեմի ժամանակաց կայր դաստուան վարդապետաց ի քաղաքն Բաղէշ ի վանքն, որում անուն Ամրսուլ ասեն» (Առ. Դաւրիթ., էջ 390), սակայն չէ կարելի ըսել թէ ո՛ր դարուն կանգնուած է⁹ : Ապա՝ «Ի հնութենէ խարխալեալ» կը վերանորոգուի (անդ, էջ 390) :

Պօղոս՝ Պարոն Ամիրդուլի համար (1455ին) «հրամանաւ քաջ բարունուոյս մերոյ Ղազարոյ... ի վանքս Բաղիշոյ, որ Ամիրդուլ վերածայնի ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու կարապետին եւ Մ. Սիոնի» կը դրէ Աւետարան մը (Նօտարք, էջ 177—178) : Անկէ յառաջ ալ նոյն անձը (1450ին) միեւնոյն տեղը դրել կու տայ ձաշոց մը, ուր կը յիշուին Սարգիս վարդապետ, տէր Աստուածատուր, Մկրտիչ, Խոսրով, Ստեփանոս, Յովհաննէս դարձեալ Ստեփանոց եւ Ներսէս (անդ, էջ 164) :

Ղազար երկարատեւ առաջնորդութիւն կ'ընէ : Իր աշակերտը Պօղոս Ամիրդուլի նուէրներ կ'ընէ՝

«Ես Պօղոս վարդապետ ծառայ Աստուծոյ եւ աշակերտ Ղազար վարդապետին վկայութեամբն Աստուծոյ եւ սուրբ Յովանիսին եւ արհիեպիսկոպոսին Բաղիշու տէր Յովանիսին եւ Մկրտիչ վարդապետին Արծկոյ Սքանչելագործին եւ Սօճայ Կարապետին եւ Մկրտիչ վանիցն հօրն (Ամիրդուլ ուխտին) եւ Յովանէս եկեղեց Բանին... : Ես Պօղոս վարդապետս եւ Յովանէս արեղայն գնացաք ի ժողովքս եւ կաք ի վանքս եւ տուի զիմ երեք սուրբ Նշանն զերեք եւ չորս մասն տուի ի ժողովոց տեղն ի Ռու Զձ Թանդի տեղն, զիմ հալալ ապրանքն եւ վկայութեամբ Բաղիշու աւագ երիցանուն

տէր Միսիթարին եւ տէր Մելքիճէդին եւ առի զշարակնոցն եւ զձին եարաղովս (համեատիւք) . ոչ ոք իշխէ հեռացուցանել ի սուրբ Յովանիսի դրանէն... ի թվ. Հայոց ԶԺ» (Նօտարք, էջ 198—199) : Յիշատակագրութեանս համեմատ հաւանօրէն Ղազարի յաջորդն է Մկրտիչ¹⁰ :

Բաւական երկարատեւ լռութենէ յետոյ յիշատակագրութիւնները¹¹ կը սկսին ձայն բարձրացնել : «Գրեցաւ եւ կաղմեցաւ Մաշթոց եւ սուրբ Աւետարան եւ Գանձարան ի թվ. ՌԺԷ (1568) ընդ հովանեաւ սուրբ Յովհաննէսին, որ Ամիրդուլ կոչի» (Արարատ, 1910, էջ 626) : Աւետարանի մը մէջ կը մաղթուի՝ «Յիշեցէք զնուաստ հողի... Եղիայ վարդապետն եւ զտէր Աւետիս եպիսկոպոսն եւ զՄարաիրոս կրօնաւորն... տէր Յուսէփ... որ կաղմեցաք զսուրբ Աւետարանս ի դուռն Յովանիսին Ամիրդուլա, ի թուին Ռ եւ Ի» (1571, Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշ. Էջմ. 303) : Երեք տարի վերջ «(1574ին) ընդ հովանեաւ սուրբ Յովանիսիս, որ յանապատիս Ամիրդուլու» Յովհաննէս արեղայ Աւետարան մը կ'աւարտէ եւ կը ցանկայ յիշել՝ «զբարի վարդապետն Յոհանէս» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 138) : Ապա բաւական վերջ՝ 1598ին Գործք Առաքելոցի մեկնութիւն մը կը դրուի՝ յիշատակ «քաջ հոկտորին Յովհաննէս բարունապետին Բերկութեց ասի... յիշեցէք ի սուրբ յաղօթ. ձեր զնուաստ Բարսեղ վարդապետն...» (Հայաստան, 1851, Թ. 34—86, համալ. Հանդ. Ամս., 1937, էջ 212) : Վերոյիշեալ Յովհաննէս Բրդուլեանցի աշակերտն է Բարսեղ վարդապետը (համալ. կարեւոր յիշատակագրութիւն մը՝ Թորոս Աղբար, Բ., էջ 262—264), որ Ամրսուլի առաջնորդ կ'ըլլայ եւ արդիւնաւից գործունէութիւն կ'ունենայ : Անոր մասին Առաքել Դաւրիթեցին կը դրէ՝ «Յորում ժամանակի էր յաջորդ եւ առաջնորդ, պետ եւ զլուի վարդապետաց տեղոյն այնմիկ ոմն Բարսեղ վարդապետ, որ էր երեւելի եւ մեծանուն եւ յոլով աշակերտաց տէր եւ նոյն վանքն Ամրդուլու յառաջագոյն խրթին եւ յուի

¹⁰ 1487ին կը դրուի Աւետարան մը «յեղբ քաղաքիս Բաղիշոյ ի դուռն Ամիրսուլոյ Մ. Յովհաննէսիս եւ սուրբ Սիոնիս» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. յիշ. Հ. Պատուրեանէ) :

¹¹ 1496ին Գրիգոր Արեղայ «աշխարհաւ Տարաւնեցի» ի վանացն Ամիրդուլոյն» կը գրէ Աւետարան մը (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Գեղամ էֆէնտիէն) : Անկէ յառաջ ալ 1490ին հոն կը կաղմուի Գանձարան մը (անդ, Հ. Պատուրեանէ) :

⁸ ԺԵ. դարուն կը յիշուի «պարոն Ամիրդուլ» (Նօտարք, էջ 164 եւ 177) : «Նօտարք»ի հրատարակիչը կը գրէ՝ «Թերեւս սրբոյն Յովհաննու Մկրտչի ուխտն, որ կայ ի Բաղէշ Ամիրդուլ կոչմամբ ի յիշատակ սորին կայ կոչեցեալ» (անդ, էջ 164, ծն. 1) :

⁹ Գուցէ առաքելոց շրջանէն (Արծուի Վասպ., 1864, էջ 65—66) :

չինեալ էր... սա զամենայն շինուածն միա-
 չաղոյն քակեաց եւ ինքն վերստին հիմնար-
 կեալ շինեաց եւ կատարեաց զբովանդակն,
 զեկեղեցին եւ զտներն եւ զայլն որ ի նոսա»
 (Պատմ., էջ 390) : Ստուգիւ Բարսեղ Ամրոզլի
 երկրորդ հիմնադիրը կ'ըլլայ : Անոր շինարա-
 րական գործունէութիւնը փառաբանուած է
 դեռ ուրիշ յիշատակարանի մը մէջ՝

«Փառք... ցանկացող եղեալ երիցս երա-
 նեալ եւ մեծ հռետորին մեծ Բարսեղ բարու-
 նապետն եւ պայծառ քարոզն հանուրց հայկա-
 զեան տոհմիս եւ ետ... դժազրել զսա... բայց
 զի տակաւին չեւ եւս էր եղեալ զբաւ աս-
 տուածային տառիս եղեւ զբաւ կենաց աս-
 տուածարան վարժապետիս մեծին Բարսեղի
 ի Բաղէշ քաղաքի ի սուրբ մենաստանս որ
 Ամիրզօլու վանք վերածայնի, զոր եւ ինքս
 Բարսեղս վերստին հիմանէ նոր նորոգեաց
 զտաճար սուրբ Աստուածածնին եւ զսրբոյն
 Յովհաննու Մկրտչին եւ զսրբոյն Ստեփանոսի
 նախավկային եւ ինքն եղեալ կայ սա դրան
 սուրբ տաճարացս : Եւ զիտելի է զի մինչեւ
 ի է տետրն որ զրեցաւ դեռ կենդանի էր եւ
 անտի մինչ ի յաւարտն ես յետնեալ տրուպ
 ծառայս Յոհան բանի սպասաւորս, աշակերտ
 եւ ծառայ սմին, ետու յաւարտ ածել զգանձ
 աստուածային : Արդ եղեւ զբաւ զրչութեան
 սորին ի թվս. Հայոց Ռ ու ԿԶ ձեռամբ տէր
 Վարդան քահանայի Հիզանցոյ... եւ զմեղա-
 պարտ Գրիգորիսս որ զգիրքս կաղմեցի, վայ
 մեղաւորիս» (Ա. կինեան Հ. Ն., Հաւաք. Յի-
 շատ. էջմ. 1480, Պատճառք եւ Լուծմունք
 լայն եւ նրբին զրեանց, որուն մէջ կան դեռ
 ուրիշ կարեւոր յիշատակագրութիւններ,
 որոնցմէ մին կ'աւանդէ թէ՛ Բարսեղ էր
 «յերկրէն Գաւառոյ եւ ի սուրբ աթոռոյն Բար-
 դուղիմէոսի ¹²» եւ ուրիշ մը թէ՛ անոր հայրն
 էր տէր Ներսէս, մայրը՝ Մէհրէն, եղբայր-
 ները՝ Մուրատ, Հայրապետ, Մովսէս ու
 Սրապիոն եւ քոյրը՝ Ալամ) :

Բարսեղ Աղբակեցին ¹³ ինքնաշխատու-

¹² Բարսեղ իր մահէն յառաջ (1614ին) նորոգել
 կու տայ ձեռագիր մը «ի վանս որ Ամիրզօլու վանք
 ասի, ի դուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Յովան-
 նու Մկրտչին եւ սրբոյն Ստեփանոսի նախավկային»
 (Conybeare, Cat. Brit. mus., էջ 196) :

¹³ 1437ին գրուած Յայսմաւուրբի մը յաւելեալ յի-
 շատակագրութեանը մը մէջ կայ՝ «Ես զնեցի զջաղացն
 Շամօյէն եւ բնական միւլք տուի Ս. Յովհաննէսին
 Ամրզօլի ինձ բարի յիշատակ... : Ես Բարսեղ եպիսկո-
 պոս վկայ, ես Մատթէոս արեղայ վկայ, ես Աստուածա-
 տուրս վկայ, ես Ասոմ արեղայս վկայ, ես Ղազար վար-
 դապետս վկայ, ես Խոսրով արեղայս վկայ : Առաջի Աս-
 տուծոյ վկայ եմք, որ ջաղացն վանիցն գնեցաւ» (Բիւ-
 ղանդիոն, 1907, Թ. 3300) :

Թեամբ կը ծանօթանայ «արտաքին զխոու-
 թիւն»ներու ¹⁴ եւ անոնց մէջ հմտանալով «հա-
 ւաքեաց զաշակերտս յոլովս ուսուցանելով
 զհին կորուսեալ եւ զնոր գտեալ չքնաղն
 իմաստութիւն» : Ամրզօլ կը դառնայ զխոու-
 թեան ցանկալի վայր եւ ուսումի հետա-
 մուտ անձեր (Ներսէս Բեղլու, Յովսէփ ու
 Հայրապետ) զինքը կը շրջապատեն : Բարսեղ
 մինչեւ իր ծերութիւնը վանքին մէջ ուսուց-
 չական բեմին վրայ կը կենայ եւ աշակերտու-
 թեան յորդոր կը կարգայ արտաքին զխոու-
 թիւններու ծաղկումին հոգ տանիլ : Երբ իր
 մահկանացուն կը կնքէ՝ «եղին զնա ի հան-
 դիսս գերեզմանի ի նոյն վանքն Ամրզօլայ»
 (Ա. Դաւրիթ. Պատմ., էջ 391—304, Կիւլէ-
 սէրեան, Կոլոտ, էջ 147. հմմտ. Բարսեղի եւ
 նմանապէս Վարդանի գործունէութեան մա-
 սին Արծուի Վասպ., 1864, էջ 66—71 եւ
 103—107 եւ Աղանեանց, Դիւան, Ժ.,
 էջ ԻԹ—ԼԱ) :

Անոր մահուան դառնալիք բօթն է, որ
 կը տրուի՝

«Երկեակ քառեակ թիւ հարիւրի
 Հնգից յիսնից Ժ զկնի
 Այլ եւ Դ. ամ յարաբարդի
 Դժնեա եւ դառն յեղանակի (1615)
 Ի պարփակեալ ժամանակիս
 Եւ ի լրման սոյն աւրի
 Ի մուտ տրէի Հայոց ամսի
 'ւ ի Ժէ Յունուարի :
 Մեծ վաղապետն հայկազնի
 Բասիլիոսն Աղբակեցի
 Հանգեաւ մարմնով ի տապանի
 Ի դուռն սուրբ Յովանիսի
 Ով պատահողք այսմ տառի
 Եւ փափագողք նորին շիրմի,
 Ի յարարչէն ամենայնի
 Պարգեւողէն մեզ զբարի :
 Խնդրեմ ի ձէնջ ես եղկելի

¹⁴ Յիշատակագրութեան մը մէջ Բարսեղի եւ
 Արմատօլի մասին կայ՝ «Թվին ՌՄԽԶ (1697) Յունիս Ժ.
 աւուրն Հինգշաբթի եղեւ նոր սկսեալ մահ ի քաղաքն
 Մալնայ ձորոյ, որ մակադրեալ Բաղիշ կոչեմք, ծնեալ
 եւ սնեալ ի վանս սուրբ Յովհաննու որ մակադրեալ
 Ամրզօլ յորջորջի, սա անդրանիկ զօլով ի մէջ քաղաքին
 եւ բարձր քան զերկուս վանս, որք են ի զաւառի
 կրթարան եւ վարժարան, այս մին միայն դտանի չի-
 նեալ ձեռամբ Բասիլի քաջ բարունապետի, որ եզիտ սա
 զարհետն արտաքնոց» (Հայաստան, 1851, Թ. 8—60.
 անդ ուրիշ յիշատակարանի մը մէջ գրուած է՝ «Եւ ի
 յայսմ ժամանակի ի յառաջնորդութեան տանս տէր
 Գրիգոր արքեպիսկոպոս եւ հոգեւոր ծնողն իմ Գրիգոր
 վարդապետն այլ եւս լուսաւորեաց զտունս... ձե-
 ուամբք... Վարդանիս... «որ յիշատակարանին
 գրողն է» :

Մաղթել եւ ձեզ ընդ իմ բանի
Նորին հայցմամբն անդառնալի
Զխաղաղութիւն տալ ի յերկրի¹⁵ :»

(Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Էջմ. 2077 եւ 737 :)

Բարսեղէն աւելի համբաւաւոր է Վարդան Բաղիշեցի առաջնորդը, որ վարդապետական դաւադանը Ամրուոյի Սաչատուր առաջնորդէն կ'առնու, իսկ քահանայ ձեռնադրուած է Մեսրոպ Եպիսկոպոսէն (Դիւան, Ժ., էջ 54) : Վարդան վանքը կը վերանորոգէ ու կ'ընդարձակէ՝ «Զսոյն սուրբ վանքս մեծանուն ի հիմանէ նորակերտեալ կրկին սրբատաշ, կրամած, խաչակառ կաթուղիկէիւ եւ բախատես քնակարանիւք, աշակերտական դրովք եւ ճոխ զարմանալի վարդապետական պէսպէս մատենիւք, եկեղեցական զգեստիւք եւ բնաւին անթերի իրօք եւ պիտոյիւք զարդարեալ սոսակեաց» (Կիւլէսէրեան, Կոլոտ, էջ 144) : Վարդանի գովելի կեանքը, շինարարական գործունէութիւնը եւ գիտութեան համբաւը իբրեւ շանթաձիգ իր շուրջը կը քաշեն աշակերտներու հոծ բազմութիւն մը եւ Ամրուոյ կ'ըլլայ՝ «համալսարան երեւելի, գերազանց դասատուն» (Կոլոտ, էջ 142 եւ 147, հմմտ. եւ Արարատ, 1903, էջ 176, ուր կ'ըսուի՝ «Վարդան... որ յԱմրուոյ վանքն էր նստեալ եւ դպրատուն անդր բացեալ, բազում սրղիս ի փառս ածեալ») : Անոր աշակերտներէն անուանի են Աբրահամ Թեքիրտաղցի (կաթողիկոս), Յովհաննէս Կոլոտ (պատրիարք Կ. Պոլսոյ), Գրիգոր Շղթայակիր (Պատրիարք Երուսաղէմի), Աբրահամ եւ Յակոբ Եպիսկոպոսները : Անոր օրով Սահակ Վանեցին՝ «քնակեալ ի վանս Ամրուոյ» գրքեր արտագրելով կը զբաղի¹⁶ (Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ.ի, էջ 944) :

¹⁵ Բարսեղի մահէն քանի մը տարի յետոյ (1620—1624) Ամրուոյի եւ Լիմի մէջ Տաղարան մը կամ Գիրք ստանաւորաց կը գրուի (Պատմութեան Հ. Մ., Առաքել Սիւնեցի, էջ ԻԱ) : Իսկ 1603ին (?) Գրիգոր՝ Տօնապատճառ մը կը գրէ (Հայաստան, 1852, Թ. 101) :

¹⁶ Յակոբ երէց 1689ին Ամրուոյի մէջ քանի մը սլատմագրութիւններ կ'արտագրէ (Կարենեանց, Յուց. հայ. Չեռ. էջմ. Թ. 1651) : Անկէ առաջ Գրիգոր երէց 1672ին Պատմագիրք մը կը գրէ, նաեւ հաւանականաբար նոյն թուականին (եւ ոչ՝ 1642ին) նոյն տեղը կը գրուի Ղ. Փարպեցւոյ թուղթը (Քնն. հրատ. Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն, Տիգրիս 1904, էջ Ե, Տաշեան, Մայր Յուց., էջ 250 եւ 657) : — Ժէ. դարուն սոյն վանքին մէջ ծաղկած է Սարգիս Վ. Ծաղիկ եւ հոն սպարած Յակոբ Նուբարեան (Բիւզանդիոն, 1900, Թ. 100 եւ Հանդ. Ամս., 1907, էջ 195) :

Վարդան վարդապետը¹⁷ Ամրուոյի վանքին մէջ մեռաւ եւ իր աշակերտութիւնը ցրուեցաւ՝ «Յրուեալ ցրուեցան դառինք ողջամիտք եւ եղեն իբրեւ (ի) տատանման (Կոլոտ, էջ 1—4, 148, Հանդ., Ամս., 1907, էջ 198, Հայաստան 1851, Թ. 8—60) : Եւ թէպէտ վանքը այլ եւս ծաղկումի եւ փթթումի չըջան չբոլորեց, բայց մինչեւ մեծ եղեոն կանգուն մնաց :

Ամրուոյի վանքը Բաղէշի անուանի վանքն եղած է ու արժանի կրթարան եւ «վարժարան» անունին (Հայաստան, 1851, Թ. 8—60) : Անոր վանահայրերը¹⁸ ստէպ Եպիսկոպոսական աստիճանին հասած են եւ Բաղէշի առաջնորդ ընտրուած : Արդէն վանքն ալ երկարատեւ առաջնորդարան եղած է (Արծր. Վասպ., 1964, էջ 65, 100) :

Ունեցած է շատ շարժուն եւ անշարժ ստացուածք ու կալուածք, եկեղեցական անօթներ եւ դոյքեր¹⁹, ձեռագիր²⁰ եւ տպագիր մատենաներ, նաեւ ստանատուն, կոչուած «ձնխոր» (Արծր. Վասպ., 1864, էջ 65. Բիւզանդիոն, 1907, Թ. 3300, 1900, Թ. 1001, 1200, 1202. Սրուանձտեանց, Հնոց Նորոց, էջ 26—27. Կոլոտ, էջ 145. Միրախորեան, Ուղեւորութիւն, Ա., էջ 58. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 173. Արեւելք, 1899, Թ. 4211) :

Մէկ անգամ ընդ միշտ ըսած ըլլալու համար՝ յաւելունք որ՝ Ամրուոյի եւ Բաղէշի միւս բոլոր վանքերը երբեմն երբեմն, բայց մանա-

¹⁷ Վարդանի մասին շատ յիշատակագրութիւններ կան. հմմտ. Դիւան, Ժ., էջ 16—17. Բիւզանդիոն, 1900, Թ. 1202, 1907, Թ. 3300. Արարատ, 1891, էջ 147—5, 1903, էջ 176—189. Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպ.ի, էջ 26—27. Տաշեան Հ. Յ., Մայր Յուց. հայ. Չեռ. Վիենն. Միթիթ. Մատ., էջ 1039. Գալէմբարեան Հ. Գ., Յուց. հայ. Չեռ. Միւնխէնի, էջ 33. Հայաստան, 1852, Թ. 107. Մատ Ն., Յուց. հայ. Չեռ. Սեւանայ, էջ 25. Քէշիշեան Հ. Մ., Յուց. հայ. Չեռ. Չմմառի, Թ. 1177, անտիպ : Ազաթանգեղոսի, Քնն. հրատ. ի Տիգրիս, 1909, էջ ԺԴ եւ 372. Աղաւնունի, Հայ Երուսաղէմ, էջ 500—501 եւն :

¹⁸ Վերջին շրջանի վանահայրներէն են Մկրտիչ, Երեմիա եւ Եղիշէ վարդապետները (հմմտ. Հայաստան, 1851, Թ. 8—60, Արծ. Վասպ., 1864, էջ 100, Բիւզանդիոն, 1900, Թ. 1202) :

¹⁹ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը նախորդ դարուն երկրորդ քառորդին Բաղէշի Վարդան արքեպ.ին յորդոր կը կարգար Բաղէշի շորս վանքերովը գոհանալ եւ իր իրաւունքները Կորայ Ս. Դանիէլի վանքի վրայ շտաբածել (Թ. 703 Չեռագիր Վիենն. Միթիթարեան Մատենադարանի, էջ 74) :

²⁰ Անոնց ցուցակը տեսնել՝ Արարատ, 1903, էջ 176—189, հմմտ. Սրուանձտեանց, Հնոց Նորոց, էջ 26—27 եւ Ակինեան Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, Գ., Վիեննա 1930, էջ 34—40) :

ւանդ 1895—1896ին եւ համեմատական պատերազմի շրջանին կողոպուտի եւ աւերումի ենթարկուած են (Բիւզանդիոն, 1900, Թ. 1202 եւ Արարատ, 1898, էջ 299—300) եւ թէ՛ կանքանի մը վանքեր, որոնք երբեմն Բաղէշի գաւառին եւ երբեմն ալ Մուշի — ինչպէս եւ Խիզանի — վերաբերած են կամ վերադրուած (Հայաստան, 1851, Թ. 8—60 եւ Բիւզ., 1900, Թ. 1202) :

«Ամբողջու վանքը 16րդ դարուն մէջ մեր ազգային ուսումնաճարաւ հողեւորականութեան համար լուսաւորութեան ջահ մը դարձած էր... շնորհիւ հայերէն քերականութեան առաջին յօրինիչ Կաւառացի ձօն Բարսեղ վարդապետին, որ ոչ միայն Ամբողջու մենաստանը վերանորոգած է, այլ եւ վանուց միաբանները ներանձնական կենաց հետ նաեւ ուսման մէջ զարգացնելու աշխատած է... : Այս հռչակաւոր մենաստանի միաբաններէն էր Բաղիշեցի Առաքել պատմագիրն... : Սոյն Ամբողջու վանքն... երգիչներ. տաղասացներ եւ ճարտար նկարիչներ ալ տուած է ազգին, ինչպէս են Ղազար վարդապետը, Պոռեցի Նաղաշ Մկրտիչ եպիսկոպոսը, Բաղիշեցի Կարապետ վարդապետը», նաեւ հոն ապրած են Մարտիրոս վարդապետը եւ Պօղոս Վ. Աւզալեան» (Ծաղիկ, 1892, էջ 501) :

3. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔԵԱԼԻ ԿԱՄ ԶՕՐԱՎԱՐԻ ԿԱՄ Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Անանիա Առաքեալի վանքը, որ կոչուած է նմանապէս Ս. Զօրավարի կամ Ս. Գէորգի վանք, շինուեր է Ամբողջու Ս. Յովհաննէս վանքի մօտերը : Բաւական երկար ժամանակէ ի վեր շարաթացած : Անոր հովանիին տակ 1418ին Մկրտիչ սարկաւազ Յայսմաուերք մը գրէ (Նօտարք, էջ 55—56 եւ Բիւզանդիոն, 1907, Թ. 3368. հմմտ. եւ Արարատ, 1898, էջ 20) եւ 1575ին կը գրուի Աւետարան մը (Լալայեանց, Յուց. հայ. Զեռ. Վասպ., էջ 684) հմմտ. Մովսէս վանքերը :

4. ԱԻԵԿՈՒ ԿԱՄ ԱՎԵԿՈՒ ՎԱՆՔԸ

Աւեիսու կամ Ավեիսու վանքը հիմնուած է Բաղէշ «քաղաքին արեւելեան կողմը, ձորի մէջ, գրեթէ կից քաղաքին» (Կիւլէսէրեան, Կոլոտ Պատրիարք, Վիեննա 1904, էջ 146, ծն. 1) ²¹ : Աւեիս անունն առած է քրտական

²¹ Հմմտ. Ինճիւնեան, Նոր Հայաստան, էջ 174 եւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 265 :

Ավ եւ Աեիս բառերէն, որոնք կը նշանակեն ջուր ու ցեխ, վասն զի աւանդութեան համեմատ բորոտ աղջիկ մը Թաղէոս առաքեալին կը դիմէ եւ ջրով ու հողով ցեխ կը շինէ եւ զայն քսելով կը բուժուի իր ախտէն (Բիւզանդիոն, 1898, Թ. 508) : Կը կոչուի Աւեիսու Ս. Աստուածածին, վասն զի իր սիրուն, ճարտարարուեստ եւ դժբէթաւոր եկեղեցին նուիրուած է Տիրամօր (Բիւզանդիոն, 1900, Թ. 1148, 1150 եւ 1909, Թ. 3918). բայց կ'անուանուի նաեւ Ս. Թաղէի վանք, կա'մ Թաղէոս առաքեալէն աղօթքով հոն բղխած Բուժարար աղբիւրին համար (Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 242. Բիւզանդիոն, 1897, Թ. 328) եւ կա'մ սոյն առաքեալէն հիմնուած ըլլալուն պատճառով ²². Դաւիթ Բաղիշեցին՝ կը գրէ՝ «Երրորդ վանք Աւեիսու սուրբ Աստուածածնին հիմնարկեալ ի Թաղէոսէ սուրբ առաքելոյն» (Դիւան, Ժ., էջ 54) :

Աւեիսու վանքի շէնքին մասին շատ տեղեկութիւն չունինք : Անոր տաճարին շէնքը քարուկիր է եւ կաթուղիկէն անշուք : Տաճարին շուրջը կառուցուած են միաբաններու քանի մը սենեակներ եւ ախոռներ (Մասիս, 1887, Թ. 205—207) :

Աւեիսու վանքին հիմնադիրը նկատուած է Ս. Թաղէոս, հետեւաբար Ա. դարու հիմնարկութիւն համարուած, սակայն իրականին շատ ուշ ժամանակէն են անոր նկատմամբ եղած յիշատակագրութիւնները : Աւետարան մը կը գրուի 1496ին «յԱւեիսու վանք մերձ ի Բաղէշ յառաջնորդութեան Յակոբ եպիսկոպոսի եւ Վարդան հէրպէտի ձեռամբ Զաքարիա սարկաւազի...» (Բիւզանդիոն, 1907, Թ. 3340 եւ Սրնւանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 426, ուր եւ կը յիշուի ուրիշ Աւետարան մը, որուն թուականն ինկած է) :

Ասկէ յառաջ ժամանակ մը Մարտիրոս Հիղանցին կ'ապրի «ի վանքն Բաղիշոյ ի սուրբ ուխտն Աստուածածնի, որ այժմ Աւեիսու կոչի», ուր կ'ապաստանի նմանապէս Թովմաս վարդապետը (Հայ Նոր Վկաներ, էջ 715, հմմտ. նաեւ Տաշեան, Մայր Յուց., էջ 71) :

Աւեիսու վանքը յատկապէս հողածութեան առարկայ եղած է հռչակաւոր Վարդան Բաղիշեցի եւ Ներսէս վարդապետներու :

²² Բիւզանդիոն թերթին մէջ կը յիշուին Աւեիսու Ս. Աստուածածին եւ Ս. Թաղէոս անուն իրարմէ տարբեր, բայց իրարու մերձ վանքեր (Բիւզանդիոն, 1898, էջ 351 եւ 1898, Թ. 508), մինչ իրականին մէկ վանք է եւ ունեցած է տաճար մը Ս. Աստուածածնի եւ մասուն մը Ս. Թաղէոս անունով :

Վերջինիս օրով ներքին սպաքարներու հե-
տեւանքով պարտքերու կ'ենթարկուի:

Յովհաննէս Կոլոտ եւ Գրիգոր Շղթայա-
կիր, որոնք Բաղէշեցիներու «հացովն սնեալ»
էին եւ «Բարեկամ» էին, լսելով թէ՛ այն եր-
կու վանքն՝ Գոմս եւ Աւես «ի ներքոյ դառն
պարտեաց անկեալ է եւ խանն մեծ կոչեալ է
զվարդապետն եւ զձեզ թէ ճար մի արարէք
ձեր վանքերու պարտուցն» կոնդակով մը
Բաղէշի եւ անոր հարեւան հայ ժողովուրդը
կը յորդորեն՝ «միաբան ի միասին ժողովիք
եւ բարի խորհրդով դամէն վանք իւր թէ՛ մով
պահէք եւ երկու վարդապետքն դայն երկու
վանքն զաֆթեն եւ պահեն եւ իւրեանց կող-
մանէ մարդ դնեն եւ շէն պահեն»: Ակնար-
կուած երկու վարդապետներն են Աբրահամ
(«Թող դատաստանաւ շարժէիք զԳոմաց
վանքն իւր թէ՛ մով թող մեծարդոյ եղբայրն
մեր Աբրահամ վարդապետն շապթէր եւ
զպարտքն տայր») եւ Ներսէս («եւ զԱւեսու
վանքն իւր թէ՛ մով թող մեր մեծ եղբայր
Ներսէս վարդապետն զաֆտէր եւ զպարտին
տայր եւ եղբոր պէս հաշտ եւ խաղաղ
մնային»): Կոնդակին մէջ կը շեշտուի թէ
Աւեսու վանքի վրայ «Շատ աշխատանք եւ
երախտիք ունի մեր մեծ վարդապետն (Վար-
դան) . . . եւ մեր եղբայր Ներսէս վարդապետն
որչափ նեղութիւն այլ ունի» եւ յորդոր կ'ըլ-
լայ «դայն վանքն այլ ի վերայ իւրն թող առ-
նու մեր սրբոյ հօրն խաթերն համար»: Կո-
լոտ եւ Շղթայակիր ջերմապէս կը ցանկան
երկպառակութեանն ու անոր հետեւանքով
եղած պարտքին բարձումին, դարձեալ Վար-
դանի եւ Աւեսի արքեպիսկոպոսի կարդա-
դրութիւններու նկատմամբ վանքերու թէ՛ մե-
րու եւ գոյքերու հաստատուն պահպանումին
եւ Ներսէսի իրաւունքին²³: Ստուգիւ «ի՛նչ
գուրգարանք է զոր կը տածեն երկու մեծ
պատրիարքներն այդքան հեռու տեղերէն
դէպի Ամրդօլ, իրենց օճախն եւ միւս վան-
քերն որ Ամրդօլի ճորտեր էին տէր Վարդա-
նայ վարդապետի եւ Բարսեղի ատենները»
(Բիւզանդիոն, 1900, թ. 1191):

Վերջին ժամանակները²⁴ փոյթ տարուե-
ցաւ Աւեսու վանքին վերականգնումին եւ
«ազգին բարոյական կողմանց ծառայելոյ վի-
ճակի մէջ» դրուելուն (Միրախորեան,
Վ. Մօսկանցի, Նօտարք, էջ 98, ծն. 1):

²³ Բարդէն Վ. Կիւլէսէրեան այս ընդարձակ կոն-
դակը հրատարակած է «Բիւզանդիոն»ի մէջ, 1900,
թ. 1191):
²⁴ Վերջին շրջաններու վանահայրներէն է Պօղոս
Վ. Մօսկանցի, Նօտարք, էջ 98, ծն. 1):

Ուղեւորութիւն, Ա., էջ 58): Այս նպատակ-
ներուն հասնելու համար նիւթական հնարա-
ւորութիւն կար, վասն զի օժտուած էր բա-
ւական վարելահողով եւ զեղջուկ թէ՛ մերով
(Բիւզանդիոն, 1897, թ. 328. Արեւելք, 1899,
թ. 4211. Լուծայ, 1900, Ա., էջ 208): Են-
թարկուած է ասպատակութիւններու եւ աւե-
րումի (Արարատ, 1898, էջ 299—300), նաեւ
անխնամ ձգուած (Բիւզ., 1900, թ. 1148):

5. Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆԲԵՐԸ

Ս. Գէորգի վանք մը Բաղէշէն գրեթէ
երեք քառորդ հեռու Մօսկանի Գրձինք գիւ-
ղին քովերը շինուած է եւ ամայի ձգուած
(Բիւզանդ., 1898, թ. 508 եւ 1907, թ. 3368):

Կայ համանուն վանք²⁵ մըն ալ Շամի-
րամի մօտ, Բաղէշէն երեքուկէս ժամ հեռա-
ւորութեամբ (Բիւզանդիոն, 1898, թ. 508):

6. ԳՈՄՈՑ ԿԱՄ ԳՈՄԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԲԸ

Ս. Աստուածածնի նուիրուած այս վանքը
կը դանուի Բաղէշի Գոմք գիւղի արեւելեան
կողմը, քաղքէն հազիւ քառորդ հեռու, շատ
դուարձալի, ջրաշատ եւ ծառախիտ վայր մը
(Լուծայ, 1900, Ա., էջ 208: Բիւզանդիոն,
1897, թ. 328 եւ 1909, թ. 3918. Արեւելք,
1899, թ. 4211):

Կոչուեր է երբեմն Գոմոց Ս. Աստուա-
ծածին կամ պարդապէս Գոմեաց կամ Գո-
մոց վանք (Սարգիսեան, Տեղագրութիւնք,
էջ 242): «Կը կոչուի նաեւ Տատրակարնակ
սուրբ Աստուածածին (կամ Տատրկայ վանք)
տատրակներու շատութեան համար» (Կիւ-
լէսէրեան, Կոլոտ, էջ 148, ծն. 1. Բիւ-
զանդիոն, 1907, թ. 3340, հմմտ. Ինճիճեան,
Նոր Հայաստան, էջ 174):

Ս. Աստուածածնի եկեղեցին հոյակապ
է եւ սիրուն: Ութը քառասիւններու վրայ
չորս կամարներով կը բարձրանայ կաթու-
ղիկէն (Բիւզանդիոն, 1900, թ. 3918):

Եկեղեցւոյ դրան ճակատին արձանա-
դրուած է՝ «ի հայկազեան թիւ Թորդոմի
ՌժԼ (1681) շինեցաւ եկեղեցիս յանուն սուրբ
Աստուածածնի, սուրբ Գէորգայ(յ) զօրավա-
րին եւ սրբոյն Սարգսին, իսկ Ռժ քա-
ռասներորդին առաջնորդին յանկ եւ լսցերս

²⁵ Հ. Սարգիսեանի ծանօթ է «ի մէջ քաղաքին
Բաղիշոյ ի գաղաթան միոյ ի բարձրագոյն լեռանց»
Ս. Գէորգ անուն մատուռ մը (Տեղագրութիւնք,
էջ 248):

ներքին եւ վերին Եւզնկայ (°) բուրձ ընդ նմին, որ յայտ ամին սպանեն անմեղն Պետրոս մահտեսին, որ բազում օժանդակ եւ ձեռնառու եղել է չէնքն, է հայրապետութեան տէր Եղիազար կաթողիկոսին, որ վերջին պսակեցայ ձեռաց նորին եւ նուաստ ողի (Մեսրոպ) Բաղիշեցի, որ եմ առաջնորդ Աղձնեաց երկրի եւ աշակերտ Աւետիք Պուտիկոսի եւ եղբորորդին հաւին Մեսրոպի... մրճոտի: Շնորհօքն եւ կամօքն շինեցի է հիմնէ վանքս կամարակապ եւ հաստեցի: Այլ եւ զհայրն մեր տէր Ներսէս Մոկացին, որ բազում աշխատանք կատարեաց է չէնքն» (Բիւզանդիոն, 1909, Թ. 3918): Տաճարին աւագ դրան²⁶ վրայ կայ սա յիշատակարանը՝ «Տէր Յիսուս Քրիստոս Աստուած, ողորմութեամբ Աստուծոյ, վերաշինեցաւ Ս. Աստուածածնի եկեղեցիքս է հիմանէ սրբատաշ վիմօք շորեքանկեան, վերակացութեամբ Մեսրոպ աստուածարան վարդապետին, օղնական եւ բարեխօս ժողովրդեան. է թվին ՌՃԽ. ամէն» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1148, 1907, Թ. 3340):

Վերայիշեալ Մեսրոպ եպիսկոպոսն երկպառակութեան հետեւանքով Գոմոց վանքէն կը հեռանայ եւ օտարութեան մէջ կը մեռնի, բայց եկեղեցւոյն մէջ անոր մարմարեայ յուշարձան մը կը նուիրուի, վրան արձանագրուած՝ «Ով լուսադարդ նշան Փրկչին, բարեխօսեա Մեսիային, վասն Մեսրոպայ քաջ հոեաորին, շինող սրբոյ այս տաճարին, սեամբք շորիւք հիանալի, այլ եւ Գաւիթ եւ Գումբէթին, խցիւք եւ պարսպօք շուրջանակի, եւ վախճանեալն է նշդեհի, է քաղաքն Ղօնիայի, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք ՌՃԶԳ» (1724, Բիւզանդիոն, 1909, Թ. 3918):

Գոմոց վանքի միւս շէնքերը, թէեւ երկյարկանի, սակայն այնքան աչքի զարնող բաներ չեն եւ եկեղեցւոյն հետ ստէպ նորոգութիւն տեսած: Շողիկեան տունը — գլխաւորաբար Ղարիպճան — Գոմոց վանքին բարեպարգութեան ու նորոգութեան համար նիւթական ու բարոյական ամէն աջակցութիւն շուայլօրէն ընձեռած է (Բիւզանդիոն, 1909, Թ. 3918, 1907, Թ. 3340, 1900, Թ. 1148, Արեւելք, 1887, Թ. 985 եւ 1189):

Աւանդութիւնը Գոմքի վանքը Ս. Թագէտի ձեռակերաններէն կը համարի (Բիւզան-

դիոն, 1898, Թ. 508, 1907, Թ. 3340): Անոր հիմնարկութեան իսկական պատմութիւնը չենք դիտեր: Վերջին շրջաններու մէջ Բաղէշի կամ Պիթլիղի առաջնորդարանն էր եւ հոն կը ծաղկէր Մեսրոպ արքեպիսկոպոսը. «Եւ կան է քաղաքիս Գ. (Գ.) անուանի վանք: Ա. Գոմոց վանք առաջնորդարան Բաղիշու քաղաքին եւ երկրի վերատեսուչ հոգեւոր այժմ Մեսրոպ վարդապետ» (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Գաղեան Վ. է, Ա., էջ 99): Սոյն Մեսրոպ արքեպիսկոպոսն եղած է Գոմքի վանքի ամէնէն նշանաւոր եւ շինարար առաջնորդը, որուն մօտ կ'ուսանի Գաւիթ Բաղիշեցի (Արարատ, 1900, էջ 122): Իր օրով (1661ին) «է վանքս Գոմաց է դրունս սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գէորգ զօրավարին» կը գրուի Մաշթոց մը (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 996): Ասկէ յառաջ ունինք ուրիշ յիշատակագրութիւն մը:

Շողիկեանց տան մէջ գտնուած 1578ին գրուած աւետարանի մը մէջ կայ՝

«Յիշատակ Տէր Մելքիսեթ կրօնաւորին... է դուռն Ս. Սարգսի եւ Ս. Գէորգայ գծող Եղիա վարդապետ... ծաղկեալ եւ կազմեալ է Բաղէշ է վանքս Գոմոց է դուռն ամենօրհնեալ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գէորգեայ, յառաջնորդութեան տեղւոյս Տէր Սարգիս արհիեպիսկոպոսի...: Աստուած ողորմի ասացէք Միրաքի որդւոյն Կարապետին որ բեմի ծածկոց մի երես Ս. Գէորգ զօրավարին դրան... Աստուած ողորմի Վանդայ Դիլաքին... որ զՄամայի կտորն վերեւ ջաղցին ներքեւ Գ. ծառ էառ ոհվ արար է դուռն Ս. Գէորգայ, յիշեցէք գԻլլանն, որ ետուր զկէծկըդար զետով դէն արեզդէմի տակ Ս. Գէորգայ... Աստուած ողորմի Վանդայ տէր Սարգսին, որ առաւ երկու արտ է Մըրրայի Բէզիկանց մէկ տէր Սախակից, մէկ Վարդոյից եւ արար ռիֆ Ս. Գէորգայ... Աստուած ողորմի Յովանիսի հաւրն Մարտիրոսին, որ զԿարմընճի արտ ճոթով ոհֆ արար Ս. Գէորգայ զաւրավարին»²⁷ (Թորոս Աղբար, Բ., էջ 269—270):

«Ձեռամբ Կարապետի ընդ հովանեալ Ս. Գէորգի, որ է Բաղէշ քաղաքի» 1696ին կը

²⁷ Գրիգոր Յլաթեցիի վկայարանութիւնը կը գրուի «է Բաղէշ քաղաքի է վանս Գոմաց սուրբ Աստուածածնի եւ սուրբ Գէորգեայ զօրավարին (Հայ նոր վկաներ, էջ 272): Հոն գրուած է նմանապէս Գանձատեար մը «ձեռամբն Կարապետ արեզայի» (Տաթև, Տարեգիրք, 1930, էջ 237):

²⁶ «ՌԱԷ» Թուականը կը կրէ փայտէ դուռը (Բիւզանդիոն, 1900, Թ. 1148):

գրուի Յայամաուուրք մը²⁸ (Թորոս Աղբար, Բ., էջ 270):

Անուանին Վարդան Բաղչիչեցի եւ Յովհաննէս Կոլոտ ու Գրիգոր Շղթայակիր նաեւ Գոմքի վանքն իրենց հոգածութեան առարկայ կ'ընեն եւ կը ցանկան որ՝ սոյն վանքը Արրահամ վարդապետի ղեկավարութեամբը պարտքերէ ազատի (Հմմտ. Աւետիս Ա. Աստուածածնի վանքը):

Գոմքի վանքը ունեցեր է շատ արտեր եւ հասութարեր միջոցներ²⁹, սակայն զանոնք լաւ տնտեսող չէ եղած (Բիւզանդիոն, 1898, Թ. 508, Լուծայ, 1900, Ա., էջ 208): Վերջին շրջաններուն Եղրաս փոխ վանահայրը³⁰ կը ծրագրէ Ամրդօլի եւ Գոմոց վանքերը միացրնել եւ անոնց հասոյթներով աղջիկներու վարժարան մը բանալ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1056): Մհ. Դարխալան Շողիկեան անձնական ծախքերով վանքը քանի մը կանոնաւոր սենեակներով եւ դպրոցով կ'օժտէ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1198): Իրմէ յառաջ 1889ին Միացեալ ընկերութիւնը հոն արդէն վարժարան մը բացած էր (Փունջ, 1896, Թ. 2492):

Գոմքի մէջ պահուած ու յարգուած են կենաց փայտէն մասունք մը, Ս. Բարսեղի աջը, Ս. Գէորգի նշխարներէն եւ Ս. Գրիգորի բեւեռը (Ինճիճեան Հ., Նոր Հայաստան, էջ 174):

7. Ս. ԴԱՆԻԷԼԻ ՎԱՆՔԸ

Ս. Դանիէլի վանքը Բաղէչի (Մօտկանի) Աշպներ գիւղի մէջ էր եւ սիրուած ուխտավայր էր (Բիւզանդիոն, 1898, Թ. 507 եւ 1907, Թ. 3368): — Տարբեր է Կոփայ Դանիէլի վանքը, որուն մասին յետազային (Հմմտ. Յառաջ, 1918, Թ. 31 եւն):

8. ԽՆԴՐԱԿԱՏԱՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Խնդրակատար Ս. Աստուածածնի վանքը³¹, որ Բաղէչի երկրորդ անուանի

²⁸ Ժէ. դարուն «Ի Բաղէչ, ի վանքն Գոմաց Ս. Աստուածածնին» կու գայ տէր Մխիթար Երեցանց (Լալայեանց, Յուց. Հայ. Ձեռ. Վասպ., էջ 1019):

²⁹ Գոմքի թեմին մէջ էր Հինգ խորան եկեղեցին (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 174):

³⁰ Վերջին վանահայրնէրէն էր Վարդան վարդապետը (Նօտարք, էջ 101, ծն. 5):

³¹ Ձեռքերնիս հասած է Խնդրակատարի մասին ընդարձակ գրութիւն մը, որուն հայերէն բնագիրը «Բանասէր»ի մէջ (1905, էջ 288—303) եւ գաղղիերէն թարգմանութիւնը Journal Asiatiqueի մէջ (1915, II, էջ 400) լոյս տեսած է (Հմմտ. Macler, Cat. arm. Bibl. nat, էջ 109):

վանքն է, կառուցուած է Բաղէչ քաղաքին հարաւակողմը, Ամսլ գիւղին դիմացը, ձորակի մը մէջ, շրջապատուած գեղեցիկ եւ առողջ բնութեամբ (Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 319, Միրախօրեան, Ուղեւորութիւն, Ա., էջ 59, Բիւզանդիոն, 1898, Թ. 508): Եկեղեցին գեղեցիկ է եւ կոկիկ (Բիւզանդիոն, 1909, Թ. 3918): Սրուանձտեանց անոր գմբէթը կ'որակէ «աննման» (Համով Հոտով, էջ 108): Տաճարին աջակողմեան եւ ճախակողմեան դասերուն մէջ կան տապանները Արրահամ (1724) եւ Աւետիք (1701) վարդապետներուն³²: Հ. Ինճիճեան կը գրէր՝ «Խնդրակատար, որ է յանուն Աստուածածնի, մեծ քան զայլ երիս մենաստանսն եւ անկանի ի հարաւակողմն քաղաքին, եկեղեցի նորա... գմբէթաւոր, ի զլուս գմբէթին է խաչ մեծ ի բաղձագունի քարանց, յարկ եկեղեցւոյն փոխանակ կղմնտրոյ ծածկեալ կայ քարամբք միապաղաղ ընդ միմեանս ազուցեալ» (Նոր Հայաստան, էջ 174): Յարակից չէնքերն ալ աղէկ էին, մանաւանդ դպրոց-որրանոցը: Վերաջինութիւններու եւ նոր շինութիւններու մեծ մաս մը կատարուած է 1880—1887 թուականներուն (Բիւզ., 1900, Թ. 1150, 1907, Թ. 3340, 1909, Թ. 3918. Արեւելք, 1887, Թ. 1189):

Խնդրակատարի հիմնարկութիւնը Ս. Թագէոսի կ'ընծայուի, ինչպէս անոր ընդարձակ պատմութեան մէջ նշանակուած կը գտնենք՝

³² Արծուի Վասպուրական թերթին մէջ կը կարդանք՝ «Տաճարը վանքին արեւելեան կողմը շինուած է, քիչ մը երկայն քառակուսի է, որուն երկայնութիւնը 48, լայնութիւնն 34, բարձրութիւնն ալ 28 ոտնաչափ է: Ասոր կամարներն ու գմբէթը չորս սիւնի վերայ հաստատուած են եւ գմբէթը եկեղեցւոյն ճիշտ կենդրոնը շինուած է, դուռը արեւմտեան կողմն է, բայց վրան արձանագրութիւն գրուած չկայ. եկեղեցւոյն դրան առջեւը ութը սիւնի վերայ, հաստատուած կամար մը կայ:

Տաճարին հիւսիսային կողմը դասին մէջ Աւետիք վարդապետին մարմարին տապանաքարին կղերքին վերայ հետեւեալ արձանագրութիւնն գրուած է՝ «Այս է տապան մեծի վեհին, Տէր Աւետիք վարդապետին, որ է շինող սուրբ տաճարիս, Խնդրակատար Աստուածածնի, եւ պարսպաց եւ միջոցաց, շուրջանակի բոլորովին. իսկ ի վինել Հայոց թուին ՌՃԾԹ. փոխի մահուամբ յաստի կենացս յանմահական եւ յերկնային մեծի պահոց քառասնորդին ի յառաջին կիրակէի եւ սուգ էած անմխիթար իւր սիրելի աշակերտին, ինձ Արրահամ վարդապետիս եւ սիրելեացն ամենայն, յամի Տեառն 1710» (անդ, 1864, էջ 196): Իսկ աւագ խորանին աջ կողմը պատին վրայ խաչարձանի մը տակը գրուած է՝ «Ի հիմանէ ձեռամբ Աւետիք վարդապետին, նաեւ կաղմեցաւ սուրբ խաչս յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնողացն, նաեւ Արրահամ վարդապետին եւ այլոց աշակերտելոց անձանց եւ քաղաքի քահանայից եւ ժողովրդոց, յառաջնորդութեան Մեսրոպայ վարդապետին թվ. ՌՃԽԲ» (Անդ, էջ 196—197):

«Եւ արդ զիտութիւն լիցի ձեզ քրիստոսադաւան եւ աստուածասէր ժողովրդեանդ: Յաղագս Խնդրակատար սուրբ Աստուածածին անուն եկեղեցոյս, որ է նախ հիմնարկեալ եւ կառուցեալ ձեռամբ Թաղէոսի սուրբ Առաքելոյն: Եւ այս է պատճառն որ Խնդրակատար կոչի եկեղեցիս այս: Ասի թէ սուրբ առաքեալն Թաղէոս հազար եւ մի եկեղեցի շինեալ է յանուն սրբուհոյ Աստուածածնին եւ այն հազարաց վերջին այս է հանդիպեալ, որոյ անունն Խնդրակատար վերածայնի եւ թէ որպիսի իրօք՝ ասի ի պատմութեանց: Յորժամ սուրբ առաքեալն Թաղէոս կատարեաց զեկեղեցին օրհնելն ի դուժս անկեալ բազկատարած խնդրուածօք եւ ասաց... Յայնժամ ամպ լուսաւոր երեւեալ ազեղանման մի ծայրն ի վերայ վանիցն եւ միւսն ի վերայ գեղջի միոյ, որ Ամպ ասի: Եւ ի մէջ ամպոյն երեւեալ Ս. Աստուածածինն եւ Քրիստոս ի գիրկն՝ ձայն եղեալ յամպոյն եւ ասէ՛ վասն խնդուածաց մօր իմոյ եւ արեալ (լուեալ) աղաչանաց քոց կատարեսցին խնդրուածք ձեր գերազանցապէս: Ով ոք հաւատով զիմեալ գան յայդ սուրբ եկեղեցիդ վաղվաղակի եւ առ ժամայն կատարեսցին խնդրուածք նոցա ըստ բաղձանաց սրտից իւրեանց: Վասն այսր պատճառի եկեղեցի Խնդրակատար անուանեցաւ եւ զիւզն այն Ամպ³³ կոչեցաւ մինչեւ ցայսօր ժամանակի» (Բանասէր, 1905, էջ 295—296. Հմմտ. եւ Սարգիսեան, Տեղադրութիւնք, էջ 242):

Թէպէտ աւանդութիւնը Խնդրակատարի հիմնարկութիւնը մինչեւ առաջին դարը կը հասցնէ եւ զայն առաքելաչէն կը համարի, սակայն իրականին անոր շինութիւնը վերջին դարերու գործ է: Ստուգապէս չէ կարելի ըսել թէ ե՛րբ հիմնուած ըլլայ: Հաւանօրէն ժ. գ. դարէն վերջը:

Վարդան քահանան 1567ին³⁴ կը գրէ Գանձարան մը՝ «Ի Բաղէշ քաղաքի եզերն ի գեօղս Մարգորդ (Մարգորդ) ընդ հովանեաւ

սուրբ Գէորգեայ զաւրաւարին... եւ ի մերոյ սուրբ ուխտի առաջնորդութեան Խնդրակատար Ս. Աստուածածնին ներսէս բանիրուն եւ երջանիկ բարունասպետին, որ զգանձարանս եւ գրել... դարձեալ յիշեցէք զբարունասպետն մեր գտէր ներսէս Բաղիշեցին եւ զհոգեւոր գաւակսն, որ են աշակերտք իւր զներսէս բանիրուն եւ քաջ բարունասպետ Ամկեցին, զՀէրապետ վարդապետ զԴաւիթ վարդապետ եւ զՅովհաննէս վարդապետ եւ զԳրիգոր աշակերտն, եւս առաւել զմիարանքն իւր զՂապար արեղայն, որ յայսմ ամի հէրպետ էր եւ զՅակոբ կրօնաւորն եւ զԱրրահամն եւ զայլսն զամենայն զօտար եւ զբնակսն, զտնտես եւ զսարկաւազունս, զմշակս եւ զայնոսիկ, որ երախտիք ունին եւ աշխատանք ունին ի վերայ սուրբ վանուցս: Դարձեալ յիշեցէք... գտէր ներսէս, որ եւ գրել զԳանձարանս եւ զԱւետարանն եւ զերկու ձեռք ժամու հանդերձն զպղնձագործ Մախսուտի արտերն, զմահտեսի Մուրատի արտն եւ արծաթի սկիհ մի եւ ի դուռն Խնդրակատար Ս. Աստուածածնին³⁵ յիշ (= «վաղՖ») եւ յիշատակ» (Թորոս Աղբար, Բ., էջ 256—257. Հմմտ. եւ Բիւզանդիոն, 1907, Թ. 3340):

Այս յիշատակարանին մէջ յիշուած զոյգ ներսէսներու³⁶ եւ անոնց յաջորդներու գործունէութեան մասին Խնդրակատարի պատմութիւնը կը հաղորդէ՝ «...Եւ ընդ աստուածասարգեւ օրհնութեանս զիտութիւն լիցի ձեզ... զի այս Խնդրակատար սուրբ Աստուածածին անուն եկեղեցիս... եւ անուանի եւ հոչակաւոր վանք, եւ է մեծամեծ վարդապետաց դամբանարան եւ բնակութիւն, որք զմեանս փոխանորդելով մինչեւ եկեալ հասեալ ի թվին ԶԿԳ. ոմն բնաւոր ՍօՓ անուն եկեալ ի Պարսկաստանէ եւ տիրեալ այսմ աշխարհի, աւերելով, թալանելով եւ կողոպտելով, որ Գ. ամ ամայի եւ աւեր մնաց քաղաքս, այս

³³ Ամպ զիւզի Ս. Յակոբ եկեղեցոյն համար ալ կ'աւանդուի թէ երբեմն վանք եղած ըլլայ (Բիւզանդիոն, 1907, Թ. 3340): Հոս 1504ին կը գրուի Աւետարան մը (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակ. Գեղամ էֆէնտէն):

³⁴ 1458ին կը գրուի Լուծմունք նարեկի՝ «ի լուսադարդ անապատիս Աստուածածնի Տիրամօր տաճարիս, որ այժմ Խնդրակատար վանս կոչի» (Նօտարք, էջ 188—189. Բիւզանդիոն, 1907, Թ. 3340): Աւետարան մըն ալ 1455ին կը գրուի «ընդ հովանեաւ Խնդրակատար Աստուածածնին», որով կարծեմ Խլաթի եկեղեցին կ'ակնարկուի (Նօտարք, էջ 182): Ասոնցմէ վերջը 1547ին Խնդրակատարի կը տրուի Ոսկեգործիկ մը (Սարգիսեան Հ. Բ., Մայր Յուշ. Վենետ., էջ 860):

³⁵ 1569 ներսէս բարունասպետի խնդրանքին վրայ Յակոբ սարկաւազ Պատմագիրք մը կը գրէ (Աղաթանգեղոս, քն. Հրատ. 1909, Տիգրիս, էջ ԺԳ եւ 372. Հմմտ. Կարենեան, Յուշ. էջմ. 1615):

³⁶ Ներսէս Ամկեցիի օրով Յայսմաւուրք մը կը գրուի (Թորոս Աղբար, Բ., էջ 260, ուր եւ էջ 253—262, հրատարակուած են Խնդրակատարի ձեռագիրներէն ոմանց յիշատակագրութիւնները): Ներսէս Ամկեցին Բաղնից էջմիածնի վանքին առաջնորդ եղած է (Բիւզանդիոն, 1909, Թ. 3916 եւ Հանդ. Ամս., 1940, էջ 197): — 1623ին կ'երեւայ ներսէս Ի Buchis ի քաղաքէ, ի վանաց Sancta Maria delle Grazie: Այս անուններու տակ Հ. Ալիշան կը փկատէ Բաղէշ քաղաքն եւ անոր Խնդրակատար վանքը, ուստի եւ ներսէս Բաղէշի Խնդրակատար Ս. Աստուածածնի վանքն (Հմմտ. Հոյ. Վենետ., էջ 341):

վանք եւ եկեղեցիք եւ յետոյ կարողութեամբն Աստուծոյ Ամիր Շարֆն էառ զբերթն եւ ցրուեալ ժողովուրդքն դարձան ուրախութեամբ ի տունս իւրեանց եւ շինեցաւ երկիր՝ քաղաքս եւ վանորայք եւ շատ եկեղեցի, զի աւրհնեալն Աստուծոյ Ամիր Շարաֆն էր իրրեւ զմի ի բարեպաշտ թագաւորացն եւ ինքն օգնական լինէր աղքատաց եւ վանօրէից. ի յայս բարի ժամանակս որ էր Թուականն 249 (1514) շինեաց Ներսէս վարդապետ(ի) ձեռամբ Խօջայ Թումաշանին զպարիսպն Խնդրակատար սուրբ Աստուածածնին յիշատակ հոգոց իւրեանց եւ ծնողաց: Դարձեալ այսօրիկ են կացել առաջնորդք եւ տեսուչ սուրբ ուխտիս զոր կարացաք գիտել, 249 թվականէն մինչեւ եկեալ հասեալ առ մեզ, որ է թուական ՌՃԾԲ: Նախ Ներսէս վարդապետն, որ մականունն Մատաղ ասի, որ է աշակերտ Գրիգոր Արձիշեցոյն որ մականունն Չորթան կոչի: Եւ յետ նորա աշակերտ նորին Ներսէս բարունապետն Բաղ(ի)շեցին եւ յետ նորա աշակերտն իւր Ներսէս Ամկեցին: Եւ յետ նորա Յովանէս Բրօնցին: Եւ յետ նորա կարապետ Փարխանդցին որ աշակերտ Ապարանցի Սիմէօն վարդապետին: Եւ յետ նորա աշակերտն իւր Պետրոս Գաւաչցին: Եւ յետ նորա Յակոբ Բաղիշեցին: Եւ յետ նորա Աւետիք վարդապետն որ է այժմ առաջնորդ եւ վերատեսուչ սուրբ ուխտիս, որ Խնդրակատար սուրբ Աստուածածին վերածայնի: Սոքա ամենեքեան մեծ երախտաւորք են եղել վանիցս եւ բազում աշխատանք ունին ի վերայ սորա եւ շատ յիշատակ են եղեալ ի սուրբ ուխտս թէ գիրք, թէ արա, թէ դուքան, թէ տուն, զորս ինքեանք զնեալ մեծ գնով եւ արարեալ յիշատակ բարի հոգւոց իւրեանց եւ ամենայն արեան մերձաւորացն ի դուռն Խնդրակատար սուրբ Աստուածածնին: Եւ զորս խրատական բանիւ եւ քաղցրուսոյց վարդապետութեամբն իւրեանց յորդորելով զհաւատացեալ ժողովուրդքն եւ նոքա ժամանակս, ժամանակս արարին շատ յիշատակ եւ ռիսֆ սուրբ Աստուածածնին, ջաղաց, դուքան, արտ, տուն ոչ խնայելով յինչս եւ յստացուածս իւրեանց, նաեւ զանձինս եւս եղեալ էին ի վերայ վանօրէից եւ եկեղեցեաց» (Բանասէր, 1905, էջ 293—295):

Վերոյիշեալ Դաւիթ Բաղիշեցին վանքին մասին կ'արտայայտուի «Բ.—դ. վանք Խնդրակատար վայրածալ (վերածայնեալ)

յանուն ամենասրբոյնոյ շինեալ յառաջ ձեռամբ Թաթէոսի առաքելոյն, դամբարան վարդապետացն Ներսէսի Բաղիշեցոյ եւ միւս Ներսեսի հերապետին եւ կարապետի Փարխէնցոյ եւ Պետրոսի վարժապետացն եւ ի սոցանէ վարժեալ անթիւ ջոկք վարդապետաց եւ այժմ ծառայ սուրբ կուսին կարգեալ... ես... Դաւիթ բանասէր» (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ.ի, Ա., էջ 99):

Դաւիթ, որ Մեսրոպ եպիսկոպոսէն³⁷ վարդապետական զաւազան կը ստանայ, Ս. Աստուածածնի մէջ շատ մը նորոգութիւններ կ'ընէ եւ ապա Լիմ անապատ³⁸ անցնելով հոն կը կնքէ իր մահականացուն (Արարատ, 1898, էջ 122): Անոր աթոռին վրայ, հաւանօրէն արդէն իր բացակայութեանը, կը բարձրանայ Աւետիք վարդապետը որ անոր աշակերտած ալ է: Նա նկատելով Խնդրակատար եկեղեցւոյ հնութիւնն ու մթութիւնը, կը խորհի զայն վերաշինել: Այդ մեծ ձեռնարկին պսակումին համար անոր բարոյապէս եւ նիւթապէս կ'օժանդակեն Բաղէշի ժողովուրդն եւ Մեսրոպ առաջնորդը, նմանապէս Աբրահամ վարդապետն ու տէր Ներսէս ու տէր Նահապետ: Երկուսիւնը կը սկսի ՌՃԽԲ (1693) թուականին եւ «շինեցաւ ի հիւսմանէ սրբատաշ քարիւ ներքոյ եւ արտաքոյ. կմբէթաւոր եւ երկնանման եւ զեղեցիկ յօրինուածովք: Երջապատ եւ բարձրաբերձ պարսպաւ եւ խցերօք» (Բանասէր, 1905, էջ 296): Նորաչէն եկեղեցւոյն ապագան ապահովելու եւ անոր հասոյթները բաւարար ընելու համար, Աւետիք քանի մը խանութ (դուքան) կը շինէ եւ քանի մը հատ ալ ռիսֆ կը ստանայ (անդ, էջ 296): Նա ՌՃԾԹ (1710) թուականին կրնար հանգիստ սրտով մեռնիլ՝ գիտակից որ՝ արդիւնալից կեանք մը բոլորած էր: Բայց մեռնելէն յառաջ դեռ Խնդրակատարի կը կտակէր սկիհ

³⁷ Մեսրոպ 1638ին Փիլիպպոս կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ վարդապետական զաւազան կը ստանայ «շնորհեալ առաջնորդ մայրաքաղաքին Բաղիշուն» (Դիւան, Ժ., էջ 51): Բառորդ դարէ աւելի կը նստի «յաթոռ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գէորգոյ զօրավարին (իմա՝ «Գոմաց վանքը, առաջնորդարան Բաղշու քաղաքին եւ երկրին» (Դիւան, Ժ., էջ 53): Շատ արդիւնաշատ գործունէութիւն կ'ունենայ, սակայն անոր բաժակին մէջ, մանաւանդ կեանքին վերջերք, դատնութիւնը զգալի կ'ըլլայ:

³⁸ Լիմի մէջ խաչքարի մը վրայ գրուած է՝ «Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս առ Աստուած Բաղիշեցի Դաւիթ վարդապետին եւ ամենայն աշխատողացն. յիշեցէք ի Գրիստոս թվ. ՌՃԻԲ» (Դաւիթի մասին հմտ. Դիւան, Ժ., էջ 58, Արարատ, 1898, էջ 110—124, Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ.ի, էջ 96—99, նօտաբք, էջ 84—86):

մը, դաւադան մը, գրքեր³⁹ եւ ուրիշ թանկագին իրեր (անդ, էջ 296) : Անոր աճիւնը ամփոփուած է (ինչպէս ըսուեցաւ) տաճարին պատին մէջ, իսկ անոր պատկերը նկարուած է պատի մը վրայ (Կիւլէսէրեան, Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, էջ 146, ծն. 1. հմմտ. եւ վերը) :

Աւետիքին յաջորդութեան կը կոչուի Աբրահամ Ալամեցի վարդապետը, որ եկեղեցւոյ շինութեանը անոր արդէն աջակից եղած էր : Նա իր առաջնորդութեանը ժամանակ վանքին առունը ընթացքը կ'ուղղէ եւ աւելի կ'երկարէ . այդի ու արտ կը գնէ եւ դրամաժողով ընելով անոր պարտքերը կը վճարէ : Բարեբաստօրէն իր օրով ալ Խնդրակատարի նուիրատուութիւնները կը շարունակուին : Այսպէս՝ Գնդօյենց Աւետիս խաչ մը, Նարեկ մը եւ շապիկ մը կ'ընծայէ : Իսկ ինքը մեռած ատեն դաւադան, Աստուածաշունչ եւ ուրիշ իրեր վանքին յիշատակ կը թողու :

Նա կը մեռնի ՌՃՀԲ թուին (1723, Բանասէր, 1905, էջ 297) :

Աբրահամին փոխումէն յետոյ առաջնորդական աթոռին վրայ կը բաղմի անոր աշակերտը՝ Երեմիա արքեպիսկոպոսն ու «մաքրակենցաղ վարդապետ»ը, որ վանքին խախտուած դաւիթը կը նորոգէ եւ ջաղացքին «քամարներ»ը կը վերաշինէ : Անոր օրով Շերվնցիները վանքը կը թալանեն ու կ'աւերեն, բայց բարեբաստօրէն կարելի կ'ըլլայ ամէն բան վերահաստատել :

Երեմիա իրեն օգնական կ'առնու եւ ինչինչ իշխանութիւններով («ունէր զփոքր իշխանութիւն») կ'օժտէ իր աշակերտը Աբրահամ, որ թէ շինութիւններ կ'ընէ եւ թէ նոր ստացուածքներ կ'ընդունի (Բանասէր, 1905, էջ 297) : Աբրահամ կը մահանայ ՌՃՂԸ թուականին (1749) :

Նոյն տարին Դեկտ. 25ին Խնդրակատարի առաջնորդ կ'ընտրուի Սահակ արքեպիսկոպոսը եւ «երջանիկ հոգեւոր եւ մաքրակենցաղ վարդապետն» (որդի Փարխընդցի Գաբրիէլի), որ Սահակ Կաղնոնց վարդապետի աշակերտած էր : Սահակ կորովի եւ ձեռներէջ առաջնորդ կ'ըլլայ : Կը նորոգէ քանդուած տեղերը, եւ շատ մը նուէրներ ու նպաստներ կը ստանայ : Անոր օրինակը կը քաջալերէր ու-

րիշները բարիին մէջ մրցակցելու : «Ինքն իւր յօժար կամօքն զիւր դրեանքն՝ մէկ ձմռան հատոր մի, մէկ հարցմանց մի դրչայ, մէկ առաքինութեանց, մէկ մոլութեանց, մէկ ալպերտ, մէկ բառգիրք, մէկ պատկերասէր, պատկերատեաց, մէկ աղբիւր բարի, մէկ նարեկացի, մէկ դէոնէսիոսի աստուածարանութեան գիրք, որ ծախածին Յովանէս վարդապետին ի սուրբ Կարապետ կրկին գնեց եւ եդ ի դուռն Խնդիրկատար սուրբ Աստուածածնին . . .» (Բանասէր, 1905, էջ 297—298) : Սահակ կը վախճանի 1760ին (անդ, էջ 299) :

Անոր մահէն վերջ «կամեցողութեամբ Ս. Գէորգայ իշխանաց» առաջնորդութեան կը կոչուի Վարդան վարդապետ Բաղիշեցի, որմէ յայտնի կ'երևայ թէ Գոմաց Ս. Գէորգի վանքը որոշ իշխանութիւն մը ունէր Խնդրակատարի վրայ : Վարդան աթոռին հետ «է քէսայ» պարտք մըն ալ կը ժառանգէր : Այս անհաճոյ բան էր եւ արդեւք յառաջադէմ դործունէութեան : Ուստի անոր առաջին դործը կ'ըլլայ պարտքէ ազատումը : Կը յաջողի : Բաց աստի վանքին համար կը ստանայ շատ մը շարժուն եւ անշարժ իրեր (Բանասէր, 1905, էջ 299—303) : Ինքն ալ իր կողմէն նուիրատուութիւններ կ'ընէ եւ շինութիւններով օգտակար կ'ըլլայ : «Աստուած ողորմի ասացէք վերոյգրեալ Վարդան վարդապետին, որ ի տղայութեան վարժեալ եւ սնեալ ի նոյն վանքն եւ բազում աշխատանք եւ երախտիք ունի ի վերայ վանիցն, զխախտեալ եւ բլեալ աւերս ի վանքն նորոգեաց, որ ոչ կարեմք գրովք արկանել, թէ գումբէթի սալերն, երես բացին եւ զգաւթի պարսպի սալերն նորոգեաց, զանտեստան առիքն զվերին դարկահի տանիսն փակահաններն բաղչի պարիսպն եւ այլ բազում աւերս շինեաց զաղբիւրքն եւ այլ բազումս : Այս Վարդան վարդապետն Գ. աւետարան, դաւադանագիրք մի եդ ի դուռն սուրբ Աստուածածնին . . .» (Բանասէր, 1905, էջ 301) : Վարդանի ընտիր դործունէութեան համբաւը մինչեւ Վոսվորի ամփոփումը կը հասնի եւ կը գնահատուի : «Դարձեալ ըստամպօլ եղեալ մերս քաղաքի համաշարիքն ի սորայ առաջնորդութեան ժամանակն, որ լսեցին զբարի համբաւ Վարդան վարդապետին եւ զշինութիւն Խնդիրկատար Սուրբ Աստուածածնին ի Ստամպօլ գանձանակ կապեցին» (Բանասէր, 1905, էջ 301) :

Ասկէ վերջ Խնդրակատարի պատմութիւնը կ'ընդհատի : Այսպիսի անուանի ա-

³⁹ Աւետիք 1684ին Խնդրակատարի յիշատակ կը թողու Պատմադիրք մը (հմմտ. Մ. Խորենացւոյ Հայոց Պատմութեան քննական հրատարակութեան [Թիֆլիս 1913] յառաջաբանը էջ ԺԹ—Ի) :

ուսմանը հետևելու ջերմ գուրուրանքին ստարկայ վանք մը ժամանակ մը կարծես բոլորովին կ'անտեսուի: Բայց վերջին շրջաններուն հոն քանի մը նորոգութիւններ ու շինութիւններ կ'ըլլան եւ գլխոյն-որբանոց մը կը բացուի (Արարատ, 1898, էջ 299, Բիւզանդիոն, 1900, թ. 1150, Արեւելք, 1899, թ. 3933 եւ թ. 4127, հմմտ. եւ վերը):

Խնդրակատարի վանքը⁴⁰ սիրուած ուխտատեղի եղած է եւ ինչպէս նախորդ յատկութիւններէն տեսնուեցաւ ստացած է շատ նուէր ու նպաստ: Ունէր չորս-հինգ թեմական գիւղ, 25 խանութ եւ արտավայրեր: Հոն պահուած էր Ս. Ստեփանոսի գաղաթը կամ սկաւառակը: Ուխտի օրն էր Համբարձումի տօրը (Բիւզանդիոն, 1897, թ. 328, 1898, թ. 508, 1907, թ. 3341, 1909, թ. 3918, Լուսնայ, 1900, էջ 208, Բիւզանդիոն, 1900, թ. 1150, Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 174, Արեւելք, 1899, թ. 4211):

9. ԾԱՊՐԿՈՐԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Բաղէշի հիւսիս-արեւելեան կողմը համանուն թաղին մէջ շինուած, բայց շատոնց արդէն շարաթացած վանք է Ծապրկորի Ս. Կարապետի վանքը, որ փոքրիկ տաճար մը եւ բաւականաչափ հող ունեցած է: Այս հողերէն յետոյ կը գրկուի (Լուսնայ, 1900, Ա., էջ 209, Ինճիճեան, Նոր Հայաստ., էջ 175, Սրուանձտեանց, Համով Հոտով, էջ 209, Բիւզանդիոն, 1897, թ. 351 եւ 1898, թ. 508, 1907, թ. 3368):

10. ԾՂԱԿՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ծղակ Տուրուբերանի Բզնունեաց գաւառի գիւղերէն է եւ կը գտնուի Վանի արեւմտեան կողմը: Անկէ քսան վայրկեան հեռու՝ շինուած է Ս. Աստուածածնի վանքը (Բնաշխ. Բառարան, էջ 244), ուր 1474ին Պօղոս վարդապետը Աւետարան մը կը գրէ՝ «Գրեցաւ սա ի վանս Ծղակու ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս եւ սուրբ Յակոբայ եւ սուրբ Գէորգայ զօրավարին...» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 216): Դարձեալ 1511ին Չաքարիս կը գրէ Աւետարան մը, որը

⁴⁰ Փոխ վանահայրերէն է Մ. Վ. Մովսէսեան, իսկ Մովսէսեան վանքին պարտքերը վճարած եւ 1885ին հոն վարժարան մը բացած է (Բաղէշի առջ. տեղապահ, Մասիս, 1885, թ. 3800, էջ 479, Արեւելք, 1901, թ. 4704):

Մկրտիչ հերպէտն... «Ետ զսուրբ աւետարանս ընծայ եւ նուէր ի վանքն Ծղակու ի դուռն մաւրս լուսոյ սուրբ Աստուածածնիս» եւ կը մաղթէ՝ «Ողորմի ասացէք վանից միարանից տէր Կարապետին եւ տէր Ղազարին» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 214), իսկ Փարիսիան մամէ «Ձեռամբ տէր Մկրտիչ եպիսկոպոսին եւ տէր Կարապետին...» (Ի դօղն որ կոչի Ծղաք ի դուռն սուրբ Աստուածածնի վանեացն) յիշատակ կու տայ Աւետարան մը⁴¹ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ., էջ 685):

Ս. Աստուածածնի վանքը շատոնց ամայացած է եւ հողերը գիւղացիներու բաժին եղած (Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 273, Բիւզանդիոն, 1897, թ. 351, 1898, թ. 508, 1907, թ. 3368):

11. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔԸ⁴²

Ս. Կիրակոսի վանքը Մօսկանի Գղեխ գիւղի շրջակայքը կանգնուած է: Հռչակաւոր է իբրեւ ուխտատեղի: Վարդավառին հոն հոծ բազմութիւն մը կը գիւմէր (Բիւզանդիոն, 1898, թ. 508 եւ 1907, թ. 3368):

12. Ս. ՅԱԿՈՒԱՅ ՎԱՆՔԸ

Բաղէշի մօտերը: Ս. Յակոբ անուն վանքի մը աւերակները կան Փարիսանդ գիւղի հիւսիսային կողմերը (Լուսնայ, 1900, Ա., էջ 210): — Համանուն եկեղեցի մը եւ ուխտավայր մըն ալ կար Համբ կամ Ամպ գիւղի մէջ (անդ, էջ 210, Բիւզանդիոն, 1897, թ. 351 եւ 1898, թ. 508. հմմտ. վերը ծն. 33):

13. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՆՔԸ

«Նէլայ արեւելեան կողմը (Բաղէշի շրջակայքը) կայ մի հոյակապ եկեղեցի սուրբ Յովհաննու անուամբ, իսկ գէպի հարաւային արեւելք կը տեսնուի աւերակ վանաց մի տեղ, որոյ տեղացիները Ս. Յարութիւն անուն կու տան» (Լուսնայ, 1900, Ա., էջ 231):

⁴¹ Ս. Ղազարի մէջ կայ Մեկնութիւն Քերականութեան գրուած՝ «Ի վանս Ծղակառ ի վանքս Խիզանայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Խաչին ի թվ. ՊԿԴ» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատակ. Հ. Պատուրեանէն. հմմտ. Ս. Խաչ ի Խիզան):
⁴² Պալեան կը խորհի թէ՛ զուգէ Բաղէշի կարմիր ալի Ս. Նշան եկեղեցին՝ երբեմն վանք եղած ըլլայ (Բիւզանդիոն, 1900, թ. 1127 եւ 1141): — Կ'աւանդուի թէ՛ Մանազկերտի հարաւ-արեւմտեան կողմը կարմիր անուն վանք մը շինուած ըլլայ (անդ, 1900, թ. 1127):

14. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔԸ

Բաղիչէն չորս ժամ հետո էրէն կամ էրուն գիւղին մէջ կառուցուած է Ս. Յովհաննէսի վանքը, որ շատոնց շարաթացած վանքերու շարքին մէջ մտած է (Բիւզանդիոն, 1898, թ. 508, 1900, թ. 1001 եւ 1907, թ. 3368):

15. ՅԻՋՏԻԲՈՒՋՏԻ ՎԱՆՔԸ

Յիզաիրուզաի վանքը Բաղէչէն գրեթէ չորս ժամ հետո է, շինուած է Թուխ գիւղի քովերը: Վաղուց շարաթացած եւ իր հողերը գիւղացիներու սեպհականութեան դարձած (Բիւզանդիոն, 1897, թ. 351 եւ 1898, թ. 508, 1900, թ. 1127, 1907, թ. 3368): Հ. Սարգիսեան կը գրէր՝ «Շինուած վանացն թէպէտ եւ փոքր եւ ոչ համեմատ գեղատեսիլ դրիցն...⁴³ սակայն եկեղեցին համակ քարաչէն, դեղեցիկ եւ հինգխորանեան՝ անարատ կայ: Առնթեր պարսպին արտաքոյ կայ եւ այլ մատուոն կիսափուլ եւ քարաչէն: Ի ճակատ եկեղեցւոյն յիշատակի Մեսրոպ վարդապետ՝ շինող նորա ի Թուին ՌՃԾԷ» (Տեղագրութիւնք, էջ 250. հմմտ. նաեւ Արաքս, 1898, էջ 81. Բնաչիւ. Բառարան, Բ., էջ 55):

16. ՇԷԽԻՍԻ ՎԱՆՔԸ ԵՒ Ս. ՍԻՈՆ ՎԱՆՔ-ԵԿԵՂԵՑԻՆ

Պալեան Բաղէչի մէջ գիտէ Շէխիսի վանք մը, որ վաղուց շարաթացած է (Բիւզանդիոն, 1900, թ. 1103): Շէխիսի հետ 1895 - 1896ի աւերումներու կենթարկուի նաեւ Ս. Սիոն վանք-եկեղեցին, որ Ամրղօլի մօտ է (Բիւզանդիոն, 1897, թ. 351 եւ 1898, թ. 508 եւ Արարատ, 1898, էջ 299-300):

17. ՊՈՒԱՅ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔԸ

Ս. Յովհաննէսի վանքը — կոչուած նաեւ պարզապէս Պոռայ վանք — Պոռ գիւղի վանքն է եւ անկէ գրեթէ կէս ժամ հետո: Անուանուած է Նարեկայ կամ Նարեկացիի վանք, վասն զի իրրեւ թէ ժամանակ մը հոս Գրիգոր Նարեկացին բնակած է եղեր եւ իր աղօթամատոյցին սկզբնապիւրն հոս պահուած ըլլայ:

Պոռայ վանքը, որ Բաղէչէն մէկ երկու ժամ հետո է եւ լերան մը ստորոտը կանդնուած (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 174, Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 243, Նօ-

տաքր, էջ 55) աննման տեսարան ունի: Ստուգիւ բնական դեղեցկութիւններու հաւաքածոյ մը կը պարզուի անոր առջեւ, մինչ իր եկեղեցին ու շէնքերը սղաւորի մը հանդոյն պարզ են, մթին ու փոքր: Եկեղեցին պարթեթաւոր է եւ կոմիածոյ ամուր քարերով շինուած (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 174, Մասիս, 1887, թ. 3885, էջ 249):

Անձանօթ կը մնան Ս. Յովհաննէսի հիմնարկութեան եւ գործունէութեան բոլոր պարագաները: Յայսմաւուրքի մը յիշատակագրութենէն կ'իմանանք. «Որք կամեցան եւ զՍ. Ովաննէսն շինեցին վանք, որ ի վաղուց ժամանակէ հանդել էր...: Դարձեալ մին այլ բարութիւն արարին, որ սուրբ Ովանիսին արտ մի տուին լուսադին» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 306-307): Իսկ 1578ին «... ի վանքս Պոռայ ի դուռն սուրբ Յովհաննիսին եւ հէրպէտին տէր Թումա մղտեսի կրօնաւորին» կը գրուի Աւետարան մը, ինչպէս ուրիշ մը 1575ին գրուած էր (Թորոս Աղբար, Բ., էջ 268, Բիւզանդիոն, 1907, թ. 3368, Լալայեանց, Յուց. հայ. Ձոռ. Վասպ., էջ 684): Քարոզիչք մը գրուի՝ «Նախ ի Բաղէչ քաղաք եւ անտի ի Պոռայ սուրբ Նարեկացոյ վանքն եւ անտի ի Մուշ» (Ակիմեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2075):

Ս. Յովհաննէս այցելուած ուխտատեղի էր եւ ընդարձակ հողերու տիրացած, բայց ստէպ մնացած առանց վանահայրերու, որոնցմէ էին վերջին ատենները տէր Յարութիւն եւ տէր Անտոն⁴⁴ (Բիւզանդիոն, 1897, թ. 328, 1898, թ. 508, 1907, թ. 3368, Արեւելք, 1884, թ. 119, 1901, թ. 4704, Մասիս, 1777, թ. 3385):

18. ՏՂԱՅ ՄԱՆՈՒԿ ՎԱՆՔ

Այս վանքը Աղձնեաց Պարա գիւղին մէջ կը գտնուէր (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 233):

19. Ս. ՓՐԿ(Ի)ՉԻ ՎԱՆՔԸ

Բաղէչի Բայինկանայ դաւառակին Շէն գիւղի արեւելեան կողմը «կայ աւերակ վանուց մի տեղ, զոր գիւղացիք սուրբ Փրկչի վանք կ'անուանեն» (Լուծայ, 1900, Ա., էջ 219):

Հ. Հ. ՈՍԿԱՆ

⁴³ Սրուանձտեանց կը գրէ՝ «Սիրուն վանք մըն է ծովատեալ» (Համով Հոտով, էջ 35):

⁴⁴ Առաքել Բաղիչեցին կոչուած է նաեւ Պոռեզի (հմմտ. Տաշեան, Մայր Յուց., էջ 1061):